Azg
armenian daily

13 ՄԱՐՏ 2003 ՀԻՆԳՇԱԲԹԻ 48 (2733)

Ռոբերտ Քոչարյանին շնորհավորել են Իրանի եւ Լեհաստանի նախագահները, Ճապոնիայի վարչապետը

Հայաստանի Հանրապետության նախագահի պաշտոնում վերընտրվելու կապակցությամբ Ռոբերտ Քոչարյանին շնորհավորական ուղերձ է հղել Իրանի Իսլամական Հանրապետության նախագահ Սեյեդ Մոհամմադ Խաթամին:

Ուղերձում մասնավորապես ասված է.

«Անկեղծորեն շնորհավորում եմ բարեկամ Հայաստանի Հանրապետության նախագահի վերընտրվելու կապակցությամբ:

Համոզված եմ, որ մեր բարեկամական հարաբերությունները նոր մակարդակի կբարձրանան եւ կընդլայնվեն բոլոր բնագավառներում՝ ի բարօրություն մեր երկրների ժողովուրդների եւ ուղղված կլինեն տարածաշրջանի խաղաղության ու կայունության ամրապնդմանը»:

Հայաստանի Հանրապետության նախագահի պաշտոնում վերընտրվելու կապակցությամբ Ռոբերտ Քոչարյանին շնորհավորել են նաեւ Լեհաստանի նախագահ Ալեքսանդր Կվաշնեւսկին եւ Ճապոնիայի վարչապետ Յունիչիրո Կոյիզումին:

ԱՍՈՒԼԻՍ

Ընտրություններն ավելի կազմակերպված են եղել, իսկ դիտորդների գնահատականն՝ ավելի խիստ եւ մանրակրկիտ

Նշեց նախագահ Ռոբերտ Քոչարյանը

ԱԲԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ



Երեկ նախագահի պաշտոնում վերընտրվելուց հետո իր առաջին մամուլի ասուլիսն էր հրավիրել Ռոբերտ Քոչարյանը: Նա նախ նշեց, որ սկսելու է զբաղվել այն ծրագրի իրականացմամբ, որը ներկայացրել էր մինչ ընտրությունները: Կոնկրետ այս տարվա համար այդ ծրագրով նախատեսված է ստեղծել 30-40 հազար աշխատատեղ: Նախագահն անթույլատրելի համարեց քաղաքական ուժերի եւ անհատների միջեւ եղած հակամարտությունն ընտրազանգվածի վրա տեղափոխելը, ինչն իր բացասական ազդեցությունը կունենա երկրի ներդրումային իրավիճակի, հետեւաբար նաեւ յուրաքանչյուրի գրպանի վրա:

Անդրադառնալով մամուլի ասուլիսի հիմնական՝ ընտրությունների թեմային, Ռոբերտ Քոչարյանը դրանց արդյունքները նորմալ գնահատեց, ասելով, որ լավ աշխատելու դեպքում կարելի էր ավելի բարձր արդյունքներ սպասել: Որ ընտրությունները չավարտվեցին առաջին փուլով՝ երկու հիմնական պատճառ կար: Առաջինը, որ վստահությունը շատ մեծ էր իր ընտրվելու նկատմամբ, ինչի պատճառով Ռոբերտ Քոչարյանի ընտրազանգվածի մի մասը չէր մասնակցել ընտրություններին: Երկրորդը, որ աշխատանքը տեղերում լավ չէր կատարվել:

Ինչ վերաբերում է ընդդիմության կեցվածքին, ապա նախագահը դա կանխատեսելի համարեց: Անգամ 2-րդ փուլից հետո 2 անգամ իչ ձայներ հավաքած թեկնածուն հայտարարվում է ընտրված նախագահ: Նոյնական այստեղ արդյունքների առնչությամբ կասկածներ առաջացնելն է, «ընտրազանգվածը տալ պահելն Աժ մոտակա ընտրությունների համար»: Այդ մոտեցումը տակտիկական առումով հասկանալի է, բայց վտանգավոր է երկրի հեղինակության եւ կայունության համար:

Տես էջ 3

ՈԵՊՈՐՏԱԺ

Հանգիստ թողեք Հայոց հայրապետին

ՀՀԾ-ի ոչ պաշտոնական օրգան «Հայկական ժամանակը» երեկ նոր ապացույց տվեց իր անպատկառության, երբ ստորագույն բառերով անդրադարձավ նախորդ օրն Ամենայն հայոց հայրապետի գլխավորությամբ մեր բարձրաստիճան եկեղեցականների շնորհավորական այցելությանը նախագահական պալատ՝ հայրապետական մաղթանք տալու հանրապետության նախագահին՝ վերընտրության առթիվ ու զորակցություն հայտնելու Հայոց պետականությանը: Բոլոր հեղինակությունները, այս պարագայում՝ սրբությունները ոտնակոխ անելու ՀՀԾ-ական մոտեցմամբ, այդ թերթը միշտ հարազատ է մնում իր ոճին ու դավանանքին: Ոչ մի տող չենք մեջբերում այդ գրվածից, որ առաջին հերթին անարգանք է մեր ընթերցող հասարակությանը, նրա ազգային զգացումներին: Հայոց հայրապետը նաեւ ազգային խորհրդանիշ է, որին չեն կարող մոտենալ պիղծ հոգիները: Մեր ժողովրդի ամրությունը Պետություն-եկեղեցի միասնության մեջ է, որը ճանդելու հետամուտ են միայն ապազգային մարդիկ: Դրանք տեղ չունեն հայ իրականության մեջ: Դրանք ի վերջո դուրս են փսխվելու հայոց պատմությունից:

Ե. Ա.

Իլհամ Ալիեւը հանդիպել է Ժակ Շիրակի հետ

ԲԱԲՈՒ, 12 ՄԱՐՏ, ՆՈՅԱՆ ՏԱՊԱՆ: Երեքշաբթի Ֆրանսիայի նախագահ Ժակ Շիրակը ընդունել է ԵԽԽՎ-ում Ադրբեջանի պատվիրակության ղեկավար, ԵԽԽՎ փոխնախագահ Իլհամ Ալիեւին: Ինչպես հաղորդել է Ադրբեջանի պետական հեռուստատեսությունը, զրույցի ընթացքում քննարկվել են երկկողմ հարաբերությունների զարգացման հեռանկարները: Ի. Ալիեւը ներկայացրել է Հարավային Կովկասում առկա իրադրությունը, Ադրբեջանի քաղաքական հակամարտության խաղաղ կարգավորման ուղղությամբ: Իր հերթին, Ֆրանսիայի նախագահն ասել է, որ Փարիզը՝ լինելով ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ, հետագայում եւս քաղաքական հակամարտության տուժած կարգավորմանն աջակցելու համար:

Եվրոպական դատարանը անարդար է համարել Օջալանի դատավարությունը

ՓԱՐԻԶ, 12 ՄԱՐՏ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ստրասբուրգի մարդու իրավունքների գծով եվրոպական դատարանը մարդու իրավունքների հարգման տեսանկյունից անարդար է համարել Քրդական աշխատավորական կուսակցության առաջնորդ Աբդուլլահ Օջալանի նկատմամբ Թուրքիայում անցկացված դատավարությունը:

Ստրասբուրգի դատարանի որոշման մեջ, որն այսօր ընդունվել է Օջալանի հայցի քննարկումից հետո, ուշադրություն է դարձվում մեղադրյալի նկատմամբ «անմարդկային վերաբերմունքի» եւ Թուրքիայում կայացած «անարդարացի դատավարության» վրա, որը 1999 թվականին ղուրդ ղեկավարին դատապարտեց մահապատժի: Ստրասբուրգում այն կարծիքին են, որ այդ դատավարությունը չի կարելի արդարացի համարել, քանի որ Օջալանը «չի կանգնել անկախ եւ անաչառ դատարանի առջեւ»:

Օջալանն այժմ բանտային կալանք է կրում Իմրալի կղզում եւ Թուրքիայի կառավարությանը մեղադրում է 1999 թվականին Նայրոբիում իրեն ձերբակալելու, Թուրքիա փոխադրելու եւ մենախցում տեղավորելու առնչությամբ օրինականության խախտումների մեջ: Օջալանը նաեւ վիճարկում է դատավարության արդարացիությունը եւ իր նկատմամբ «դավաճանության ու անջատողականության համար» մահավճռի կայացումը: Այդ դատավճիռն ավելի ուշ փոխարինվել է ցմահ բանտարկությամբ:

Յույցեր Իսկենդերունի նավահանգստում

ԱՆԿԱՐԱ, 12 ՄԱՐՏ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Թուրքիայի Իսկենդերուն նավահանգստում այսօր ընդհարումներ են տեղի ունեցել երկրում ամերիկյան ռազմական ներկայության դեմ բողոքող ցուցարարների ու ժանդարմների միջեւ: Երբ ցուցարարները փորձում էին ճեղքել անցնել նավահանգստի տարածք, որտեղ գտնվում է ամերիկյան նավերով փոխադրված ռազմական գույքը, ժանդարմները նախազգուշական կրակ են բացել օդ:

Դրանից հետո ցույցի մասնակիցները ետ են քաշվել նավահանգստի դարպասներից եւ մի որոշ ժամանակ շարունակել հանրահավաքը: Այժմ նավահանգստի մոտ մնում են միայն մի քանի պիկետողներ, որոնց պարզած ցուցապաստառներով պահանջվում է, որ ամերիկացի զինվորականները հեռանան Թուրքիայից:

Ստանվեց Սերբիայի վարչապետը

Երեկ Բելգրադում, հավանաբար դիպուկահարի կրակոցներից սպանվեց Սերբիայի վարչապետ Զորան Ջինջիչը: Դեպքը պատահեց կառավարության շենքի բակում, որն անմատչելի է հասարակության համար: Կրծքավանդակից եւ ստամոքսից ստացած վերքերից վարչապետը մահացավ հիվանդանոցի ճանապարհին: Մեծ հուզում է տիրում Սերբիայում: Շատերը կարծում են, որ սպանությունը կազմված է սերբական ծայրահեղական ուժերի հետ, որոնք Ջինջիչի արեւմտամետ դիրքորոշման եւ Միլոշեւիչի իշխանության տապալման համար նրան հայտարարել էին «դավաճան»: Ուրիշները ենթադրում են, որ սպանությունը կազմակերպել են կազմակերպված հանցագործական խմբերը, որոնք ընդամենը 10 օր առաջ փորձել էին ընթացքից կանգնեցնել վարչապետի հնարավորը:

Զորան Ջինջիչը եղել է Բելգրադի քաղաքապետ: Եղել է Հարավսլավիայի նախկին ղեկավար Սլոբոդան Միլոշեւիչի կատաղի ընդդիմադիրներից մեկը: Վարչապետի պաշտոնում միշտ էլ հետամուտ է եղել Հարավսլավիայի պատերազմի հանցագործ նկատվող ղեկավարներին Հաագայի դատարան հանձնելուն:

ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Իրաքի պատերազմը կազդի Հայաստանի աղամանդի բիզնեսի վրա

Այսուհետեւ Հայաստանն ալմաստների ոլորտում կհամագործակցի միայն Քիմբեռլիի գործընթացին միացած երկրների հետ:

Հիշեցնենք, որ անցյալ տարվա նոյեմբերի 5-ին 58 երկրներ միացան ՄԱԿ-ի մանդատն ունեցող Քիմբեռլիի գործընթացին: Այն ժամանակ Հայաստանը տեխնիկական պատճառներով չմիացավ դրան: Երկրի կառավարությունը որոշեց միանալ գործընթացին եւ ՄԱԿ-ում մեր ներկայացուցչի միջոցով հանձնեց համապատասխան նոտա:

Ինչպես հայտնեց առեւտրի եւ տնտեսական զարգացման նախարարության քանկարժեք քարերի վարչության պետ Գագիկ Մկրտչյանը, ալմասի մասնակարարումներով կամ մշակմամբ զբաղվող փաստորեն բոլոր երկրները միացել են տվյալ գործընթացին, ըստ որի Հայաստանը եւս պարտավորվում է հունվ ընդունել միայն Քիմբեռլիի վկայական ունեցող երկրներից: Անմշակ կամ մշակված ալմասները մախսային կետերով կարող են անցնել միայն Քիմբեռլիի գործընթացին մասնակից լինելը հաստատող փաստաթղթերով: Ընդսմին այնտեղ գրվում է, թե որտեղից է բերվել առրանը, քանի կարատանոց է ալմասը եւ ինչ գին ունի:

Մկրտչյանի խոսքերով, Հայաստանն անցյալում եւս չի գործակցել ալմասի անօրինական շրջառություն իրականացնող երկրների հետ: Քիմբեռլիի գործընթացն ալմասի արդյունաբերություն ունեցող երկրներին փաստորեն բաժանեց երկու ճամբարի: Մի կողմում անօրինական կառավարությամբ երկրներն են կամ ալմասի հանքեր ունեցող տարածքներ բռնակցած խորվարարները: Մյուս կողմում Քիմբեռլիի գործընթացին միացած երկրներն են, որոնք ալմասների օրինական շրջառություն են իրականացնում: Նրա խոսքերով, աշխարհում ալմասների անօրինական շրջառությունն անցյալում կազմել է 7-8 տոկոս: Գ. Մկրտչյանը տեղեկացրեց, որ Հայաստանին ալմաստ են մատակարարում հիմնականում Ռուսաստանը, Բելգիան եւ Իսրայելը:

Տես էջ 8

Նյույորկի մարդասպան-մոլագարի չորրորդ զոհը եղել է Ռուսաստանից արտագաղթած

ՆՅՈՒ ՅՈՐՔ, 12 ՄԱՐՏ, ՆՈՅԱՆ ՏԱՊԱՆ: Նյու Յորքի ոստիկանությունը որոշում է վաճգավոր եւ հանդուգն սերիական մարդասպանի: Անհայտ մոլագարի վերջին հանցագործությունը եղավ չորրորդ սպանությունը մեկ ամսում: Հանցագործը, գալով Բրուքլինում գտնվող լվացքատուն, գնդակահարել է այնտեղ աշխատող Ռուսաստանից ներգաղթած 32-ամյա Ալբերտ Կոսլյարին: Ոստիկանության կարծիքով, միանգամայն ակնհայտ է, որ անհայտ ոճրագործի բոլոր զոհերը իրար հետ կապ չունեն: Ըստ երեւույթին, մարդասպանին ղեկավարում է միայն արյան ծարավը եւ չպատճառաբանված սպանություն գործելու ցանկությունը: «Այդ հանցագործությունները կատարված են սուր զգացողությունների սիրահարի կողմից», հայտարարել է ոստիկանության պաշտոնական ներկայացուցիչը: Ոստիկանությունը հաղորդում է, որ դատական փորձաքննությունը ցույց է տվել, որ 40-րդ տարվա աչփի ատրճանակը, որից արձակվել է կրակոցը, նույնական է այն զենքին, որ օգտագործվել է փետրվարին երկու խանութպանների սպանության ժամանակ: Ըստ վարկածներից մեկի, նախորդ երեք սպանություններում մոլագարը հանցակից է ունեցել, սակայն չորրորդ գործին նա գնացել է միայնակ:

Քաղաքական

«Աղերը» շատ բան է ասելու, եթե...

ՏԻԳՐԱՆ ՆԱՂԴԱԼՅԱՆԻ ԳՈՐԾ

Հաղորդագրության հենց առաջին մասուցման ժամանակ (ՀՀՀ, «Հայլուր» ծրագիր) նշվեց, որ սպանության մեջ կասկածվող 6 անձանցից երկուսը կապված են Սարգսյան ընտանիքի հետ: Սպանության պատվիրատուն՝ «Աղեր» մականունով Հովհաննես Հարությունյանը եւ «Հանրապետության» խմբագրության աշխատակից Արամ Սարգսյանը: Արամ Սարգսյանը երջ եւ եղբոր քրոջ՝ Նունեի հետ սանահեր-խավորական կապերի մեջ են:

Առաջին հայացքից կարող է անհեթեթ թվալ այս փաստը: Այսինքն՝ հետեւերը տանո՞ւմ են դեպի Սարգսյաններ, որոնցից Արամ Ջ. Սարգսյանը պնդում է, որ իրենք շահագրգռված են Տիգրան Նաղդալյանի ողջ մնալով եւ, ինչպես տիկին Գրետա Սարգսյանն էր պնդում, հույսեր էին կապում «Հոկտեմբերի 27»-ի գործով Տիգրան Նաղդալյանի դատարանում սպասվող հարցաքննության հետ:

Իհարկե, այսօր դժվար է որեւէ հստակ պատասխան տալ այն հարցին, թե ինչո՞ւ սպանվեց Տիգրան Նաղդալյանը, ո՞վ էր պատվիրատուն: Հուսով ենք, որ այս ամենը ժամանակի ընթացքում պարզ կդառնա:

Բայց նաեւ բնական ու սպասելի էր, որ կսկսվեին շահարկումները: Հատկապես մամուլում եւ հեռուստատեսությամբ:

«Հայոց աշխարհ» թերթը հենց մարտի 11-ի համարում նշելով, որ սպանությունը հաղթական է, նաեւ ավելացնում է. «Միաժամանակ հաստատվում է նաեւ մեր այն ենթադրությունը, որ Տիգրան Նաղդալյանի սպանության հետեւից, այնուամենայնիվ, տանում են Դավալու: Եվ իչ առաջ նշված ազգակցական, ինչպես սանիկ-հավորային կապերն էլ հենց դրա մասին են խոսում»: Իսկ այդ օրերին հերթական հարցահանդեսում Արամ Սարգսյանն արդեն հայտարարել էր, որ այդ հանցավոր խմբի հետ որեւէ կապ չունի, եւ ինքը հրճստոնյա է:

Տիգրան Նաղդալյանի սպանության վերաբերյալ շատ փչ բան է հայտնի հասարակությանը, ամեն դեպքում, իրավապահ մարմինները սուղ տեղեկություններ են տարածում: Բնական է, որ թերթերն ու հեռուստատեսությունը սկսել են սեփական նախաքննությունը վարել: Իսկ հարցաքննվող նյութերում արդեն գերիշխում են ծայրահեղ մոտեցումները:

Սակայն այժմ արդեն կարելի է հաստատել, որ սպանության գործն այնքան էլ պրոֆեսիոնալ մակարդակով չէր արվել: Առաջին նման արարքի համար բավական մեծ է հավաքագրվածների թիվը: Երկրորդ՝ սովորաբար նման սպանությունների ժամանակ մարդասպանը գործը կատարելուց հետո հրազենը դեն է գցում մոտակա մի տեղ: Այնինչ՝ ՏՏ տիպի ատրճանակը ննջիչները չէին հայտնաբերել: Ըստ մեր ունեցած վարկածի, ատրճանակը հայտնաբերվել է հենց Ջոն Հարությունյանի տանը: Հադրութում, Տ. Նաղդալյանի գործի հետ բոլորովին կապ չունեցող հանգամանքներում: Ըստ այդ վարկածի, Ջ. Հարությունյանը մարտական հրացանով վարագի որսորդությամբ է զբաղվելիս եղել: Տեղի ոստիկանությունն այդ մասին բողոքներ ստանալով՝ որոշել է առգրավել նախկին ազատամարտիկի տանը եղած բոլոր զենքերը: Հենց խուզարկության ժամանակ հայտնաբերվել է նաեւ ՏՏ տիպի ատրճանակը:

Գործի լուսաբանման համար աննչափ կարեւոր է փախուստի մեջ գտնվող Հովհաննես Հարությունյանի («Աղեր») հայտնաբերումը եւ հարցաքննությունը: Հույս ունենանք, որ նա կհայտնաբերվի, այլ ոչ թե 1-2 տարի կմնա ընդհատակում, իսկ դրանից հետո էլ մի որ կհայտնաբերվի, թե ինչ-որ ջրանցքում «հայտնաբերվել է 48-ամյա մի տղամարդու դիակ, որը, հավանաբար, ամիսներ շարունակ փախուստի մեջ գտնված Հովհաննես Հարությունյանն է՝ «Աղեր» մականունով»:

Այո, վստահաբար, «Աղերը» այժմ հետաքննման մեջ է երկու կողմից՝ դատախազության եւ բուն պատվիրատուի: Առաջինը՝ գործը բացահայտելու, երկրորդը՝ նրան ոչնչացնելով՝ գործը կոծկելու համար:

Այստեղ կարող է հարց առաջանալ, թե ինչպե՞ս ենք հիմնավորում Ջ. Հարությունյանի պատվիրատու «Աղերի» ավելի վերեւում գտնվող պատվիրատուի գոյության մասին մեր ենթադրությունը: Հարցին պատասխանենք հարցով՝ իսկ ինչո՞ւ պետք է ծեռներեցությամբ, մասնավոր բիզնեսով զբաղվող «Աղերը» ցանկանար Տիգրան Նաղդալյանի մահը: Գոնե կարելի է վստահ ասել, որ Տիգրան Նաղդալյանն ու Հովհաննես Հարությունյանը կիսելու բան չունեին: Վստահաբար «Աղերի» հետեւում այլ ուժեր են կանգնած: Իսկ մինչեւ ո՞ւր են տանում նրանց հետքերը:

Ինչուները շատ են: Պատասխաններին սպասենք:

ՍԵՐԳԵՅ ԳԱԼՈՅԱՆ

Համամասնական ընտրակարգով դեռեւս առաջադրում չկա

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի երեկվա նիստում միաձայն մի քանի որոշումներ հաստատվեցին: Դրանք վերաբերում էին Ազգային ժողովի մեծամասնական եւ համամասնական ընտրակարգերով պատգամավորության թեկնածուների, կուսակցությունների եւ դրանց դաշինքների առաջադրումը պատշգամբող պատշգամբաթերթիկներում քաղաքացիների ստորագրությունների վավերականությանը: Հաստատվեցին նաեւ մեծամասնական ընտրակարգով պատգամավորության թեկնածուների առաջադրման համար ձեւավորված նախաձեռնող խմբերի ցուցակների օրինականությունն ստուգելու եւ վիճակահանություն անցկացնելու, ինչպես նաեւ մեծամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող պատգամավորության թեկնածուների եւ Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով ընտրական ցուցակում առաջադրված կուսակցությունների նախընտրական հիմնադրամում կատարվող կամավոր մուծումների եւ ծախսերի հաշվառմանը վերաբերող որոշումներ:

Մարտի 11-ից սկսվել է նաեւ Ազգային ժողովի ընտրություններում մեծամասնական եւ համամասնական ընտրակարգերով պատգամավորության թեկնածուների առաջադրումը: Մեծամասնական ընտրակարգով երեկ արդեն եղել են առաջադրումներ: Կուսակցական պատգամավորության թեկնածուներից հայտնի են «Օրինաց երկրի» ներկայացուցիչները եւ «Հայաստանի երիտասարդական կուսակցության» ղեկավար Սարգիս Ասատրյանը:

Համամասնական ընտրակարգով առաջադրում դեռեւս չի եղել: Թեկնածուների առաջադրումը շարունակվելու է մինչեւ մարտի 16-ը:

Մ. Ղ.

Ի լուր լրագրողների

Մամուլի ազգային ակումբը «Հրատապ թեմա» ծրագրի շրջանակներում լրագրողներին հրավիրում է հանդիպման «Հանրապետություն» կուսակցության խաղաղական խորհրդի նախագահ Ալբերս Բագեյանի հետ:

Հանդիպումը կկայանա մարտի 13-ին, ժամը 12-ին ՄԱԱ-ում:

ՄԱԱ

ԿԱՐԾԻՔ

Չընտրված ընտրյալներ...

Մեծամասնական ընտրակարգով Ազգային ժողովի ընտրություններում պարտված թեկնածուները կարողանում են Ազգային ժողովի պատգամավորի մանդատ ստանալ համամասնական ցուցակներով: Չհաշվարկելով որոշ թեկնածուների համար այլընտրանքային տարբերակի գոյության իրավական տրամաբանությունը, մենք ուշադրություն ենք հրավիրում հարցի բարոյական կողմին. խաղաղական գործիչը, որը մեծամասնական ընտրակարգում չի հաջողել ընտրողների վստահությունը, որեւէ բարոյական իրավունք չունի պատգամավորի կոչումը կրելու:

Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

«Ազգային-ֆրիդոմնեական միություն» կուսակցության լիազոր ներկայացուցիչ

ՄԱՅՐ ԱԹՈՌ

Գարեգին Բ կաթողիկոսը հանդիպեց հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին

Մարտի 10-ին եկեղեցիների համաշխարհային խորհրդի հայաստանյան կլոր սեղանի հրավերով Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում տեղի ունեցավ գրասենյակի գործընկեր հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների համատեղ ժողով:

Հայաստանյայց առաքելական եկեղեցու նախաձեռնությամբ ստեղծված կլոր սեղանը արդեն 6 տարի համագործակցում է հայաստանյան թեմերի, ինչպես նաեւ հասարակական ավելի քան 20 կազմակերպությունների հետ: Կլոր սեղանի դրամաշնորհներով բոլոր այս կազմակերպություններն իրականացնում են սոցիալական, կրթական եւ գյուղատնտեսական ծրագրեր՝ նպաստելով երկրի զարգացմանը:

Ժողովի ընթացքում ԵՀԽ ԿՄ գրասենյակի տնօրեն Կարեն Նազարյանը ներկայացրեց կլոր սեղանի կատարած աշխատանքները եւ առաջիկայում իրականացվելիք ծրագրերը, ապա անդրադարձավ այն արդյունավետ փոխհամագործակցությանը, որ իրականացվում է Հայաստանյայց եկեղեցու, կլոր սեղանի, Հայաստանի եւ արտերկրի այլ հասարակական կազմակերպությունների միջեւ: ՀԿ-ների ներկայացուցիչները միմյանց ներկայացրեցին գործունեության իրենց ծրագրերը եւ քննեցին համագործակցության հետագա հեռանկարները ու ակնկալիքները:

Ժողովականներին հանդիպեց եւ իր օրհնությունը տվեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսը: Շնորհավորելով արձանագրված հաջողությունների համար՝ Վեհափառ հայրապետը բարձր գնահատեց ԵՀԽ ԿՄ աշխատակիցների գործունեությունը, նվիրումն ու նախանձախնդիր ծառայությունը: Հայոց հայրապետն անդրադարձավ նաեւ հասարակական կազմակերպությունների առաքելությանը՝ նշելով. «Բարեգործություն կատարելով՝ մեր ժողովրդի հոգում բարեգործության ոգի եք սերմանում»:

Հանդիպման ավարտին Նորին Սրբությունը ներկայացրեց Հայաստանյայց առաքելական եկեղեցու գործունեությունը կրթական, մշակութային եւ սոցիալական ոլորտներում, ապա պատասխանեց ներկաների հարցերին:

ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՍԱԿՈՐԳ

«Հայկական միջազգային ավիաուղիներ» ընկերությունն ընդլայնում է իր ծառայությունների ցանկը

Ինչպես տեղեկացանք «Հայկական միջազգային ավիաուղիներ» ՓԲԸ տնօրեն Վերսանդ Հակոբյանից, ընկերությունը, կնքելով ինտերլայն (Interline) պայմանագիր Ֆրանսիայի ազգային փոխադրող «էյր Ֆրանս» (Air France) ավիաընկերության հետ, այսուհետեւ իր ուղեւորներին առաջարկում է լրացուցիչ ծառայություններ: Երեւանից մեկնող ուղեւորները, գնելով «Հայկական միջազգային ավիաուղիներ» ընկերության Փարիզ մեկնող օդանավի տոմսեր, կարող են շարունակել իրենց ուղեւորությունը «էյր Ֆրանս» ավիաընկերության չվերթներով Ֆրանսիայի այլ խոշոր քաղաքներ եւ եվրոպական մայրաքաղաքներ: Սա հնարավորություն կտա ուղեւորներին օգտվելու ընկերության ընձեռած գեղչային քաղաքականությունից՝ միաժամանակ խնայելով ժամանակը:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Ամերիկացիները հավակնում են Երեւանյան լճի ափին

Հայաստանում ԱՄՆ դեսպանատունը Երեւանյան լճի ափին 8 հա տարածում կառուցում է ամերիկյան մեծ կենտրոն: Այստեղ կտեղափոխվեն եւ դեսպանատունը, եւ ՄԱԿ-ի երեւանյան գրասենյակը, եւ USAID-ն եւ ընդհանրապես Երեւանում գործող ամերիկյան բոլոր կազմակերպությունները: Ամերիկացիների համար այն եւ բնակատեղի, եւ աշխատավայր կդառնա: Այս իրողությունը կարող է նպաստավոր լինել Երեւանյան լճի համար, որ արդեն տասնամյակից ավելի անտերության է մատնվել, ճահճացել ու լցվել տիղմի հաստ շերտով: Մինչդեռ լիճը, գեղատեսիլ շրջակայքով, հանգստի գոտիրիկ գոտի կարող է դառնալ:

Ի դեպ, նույնպես ամերիկյան նախաձեռնությամբ, Թումանյանի այգին (Հալաբյան փողոցում) եւս լիովին կարող է փոխել դիմագիծը: ՀՀ կառավարության որոշմամբ այն տրամադրվել է ամերիկյան «էմիջիլեոս» կազմակերպությանը, որն արդեն այս տարի կսկսի համակարգչային ուսուցողական կենտրոնի շինարարությունն այգու տարածում, եւ մեծ ներդրումներ է նախատեսում: Եվ մինչ ոչ միայն ամերիկյան, այլեւ օտարերկրյա այլ կազմակերպություններ արդեն հասցրել են բավականաչափ հողատարածքներ վարձակալել ու սեփականաշնորհել, նոր-նոր փորձ է արվում հողի 1 մ²-ի կադաստրային արժեքը փոփոխել: Մինչ այժմ հողի 1 մ²-ի պետական արժեքը տատանվում է 1-5 դոլարի միջակայքում, թեեւ շուկայական արժեքը բռնչային տարբերություններ է ընում 5 դոլարից մինչեւ 750 դոլար (Հյուսիսային պողոտայում): Անկասկած, հողի 1 մ²-ի կադաստրային արժեքի քանկացումից հետո էլ ավելի կբարձրանա դրա շուկայական արժեքը:

Կ. Գ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության 68-ը տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010, Հանրապետության 47
Ֆաքս: 374-1-562863
e-mail: azg2@arminco.com
www.azg.am
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Տնօրեն
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՌԱՔԵԼԵԱՆ / հեռ. 529353
Համակարգ. ծառայութիւն
/ հեռ. 582483
Շուրջօրյա լրահավաք ծառայութիւն
/ հեռ. 529353
Apple Macintosh
համակարգչային շարուածք
«Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական կամ մասնակի արտատպումները տրպագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսութեամբ, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան, խստիւ արգելւում են, համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
"AZG" DAILY NEWSPAPER
Editor-in-chief
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

ԱԶԳ
Ասուլիսներ

ՄԱՍԼՈ ՓՈՒԼԻՍ

Ընտրություններն ավելի կազմակերպված են եղել, իսկ դիտորդների գնահատականն՝ ավելի խիստ եւ մանրակրկիտ

Սկիզբը էջ 1

Ընտրությունների արդյունքների վերաբերյալ եղել են բողոքներ 123 ընտրատեղամասերից, որոնցից 45-ի քվեատուփերը բացվել են: Որեւէ լուրջ փոփոխություն չի արձանագրվել: Մնացածները չեն բացվել, որովհետեւ, ինչպես նշեց Ռոբերտ Քոչարյանը, կամ վստահված անձինք էին հրաժարվել իրենց պահանջներից, կամ ընդհանրապես նրանք բացակայում էին: Այսինքն՝ «կեղծիքների մասին խոսողները կեղծիքներ էին հորինում կեղծիքների մասին»: Իսկ ընդհանրապես նախագահն առաջարկեց ընդդիմությանն ընտրել իրենց պահանջներին հասնելու իրավական ճանապարհը, որն իր կողմից կողջունվեր:

Ընտրությունների որակը գնահատելով, Ռոբերտ Քոչարյանը նշեց, որ դրանք անցել են ավելի կազմակերպված եւ լավ, քան 1998-ին: Դիտորդների գնահատականն այս անգամ եղել է ավելի խիստ, ավելի մանրակրկիտ բոլոր գործընթացների նկատմամբ: Նախագահն այս մոտեցումը հասկանալի է համարում, որովհետեւ անցել է 5 տարի, եւ այդ ընթացքում Հայաստանն ընդունվել է Եվրախորհուրդ: Եթե համեմատենք Արեւմտյան Եվրոպայի երկրների ընտրությունների հետ, ապա մերն, իհարկե, չի համապատասխանում միջազգային չափանիշներին, իսկ եթե նկատի ունենանք, որ ընդամենը 12 տարվա անկախ պետություն ենք, ապա գնահատականն ավելի մեղմ պետք է լիներ: Ռոբերտ Քոչարյանը հայտնեց, որ ինքը հետաքրքրվել է ԵԱՀԿ դիտորդներից, թե արդյոք հաջվի՞ է առնվել մեր երկրի անցումային շրջանում գտնվելը, եւ ստացել է բացասական պատասխան: Ասվել է նաեւ, որ չեն կարող մի երկրի ընտրությունները գնահատել մեկ չափանիշով, մեկ ուրիշինը՝ այլ չափանիշով: Սակայն դիտորդների ոչ բոլոր եզրակացություններին կարելի է համաձայնել, ինչի պատճառով Հայաստանի իշխանությունները խնդրել են ներկայացնել այն տեղեկությունների մանրամասները, որոնց հիման վրա արվել են եզրակացությունները: «Մենք ունենք Ազգային ժողովի ընտրություններ եւ ամեն ինչ անելու ենք դրանց որակը բարձրացնելու համար», ընդգծեց նախագահը: Նա այնուհետեւ ներկաներին հիշեցրեց, որ խորհրդարանական ընտրությունների հետ պետք է հանրաքվեի դրվի սահմանադրական բարեփոխումների փաթեթը, ինչը վերջնական տեսքի բերելու համար անհրաժեշտ կլինի Աժ արտահերթ նիստեր հրավիրել:

Ռոբերտ Քոչարյանը ԵԱՀԿ-ԱՊՀ դիտորդական խմբերի գնահատականների տարբերությունը չցանկացավ կապել աշխարհաքաղաքական շահերի հետ: Պատասխանելով ռուսական հեռուստատեսության հարցին, նա հավելումով հայտնեց նաեւ, որ հայ-ռուսական հարաբերությունները զարգանալու են եւ դրան խոչընդոտող ոչինչ չկա: «Ես իմ մրցակցից կրկնակի ավելի ձայներ եմ հավաքել եւ, իհարկե, կցանկանայի, որ ավելի դրական դիտորդական եզրակացություն լիներ», նշեց նախագահը: Նա ընդգծեց նաեւ, որ ինքը չի կարող լինել բարդույթներով նախագահ եւ բարդույթներով աշխատել: Ինչ վերաբերում է Ղարաբաղի հարցին, ապա այստեղ շարունակելու է հաստատակամ լինել: Այս առնչությամբ «ԵԱՀԿ Մինսկի խմբից ի՞նչ նոր առաջարկներ են ստացվել» մեր հարցին Ռոբերտ Քոչարյանը պատասխանեց, որ նոր առաջարկների մասին դեռ խոսք չկա: Նրա կարծիքով, այդ հարցը կլուծարկվի միայն Ադրբեջանում կայանալիք նախագահական ընտրություններից հետո:

«Ազգի» մյուս հարցը վերաբերում էր կառավարության կազմի հնարավոր փոփոխություններին մինչ Ազգային ժողովի ընտրությունները: Նախագահը հայտնեց, որ լուրջ փոփոխություններ չեն լինելու: Դրանք կլինեն միայն Ազգային ժողովի ընտրություններից հետո, երբ կձեւավորվի խաղաքական ուժերի դասավորվածությունը: Ռոբերտ Քոչարյանն այն կարծիքը հայտնեց նաեւ, որ չի լինի իրեն սատարող խաղաքական ուժերի միասնական դաշինք, որովհետեւ նրանցից յուրաքանչյուրն իր ընտրազանգվածն ունի:

Առանձին անդրադարձավ նախագահական ընտրությունների առաջին եւ երկրորդ փուլերի միջեւ ընկած ժամանակահատվածում վարչական կազմի ենթարկվածների հարցին: Նախագահը նշեց, որ պատասխանատվության են ենթարկվել միայն այն անձինք, որոնք մասնակցել են անօրինական երթին, շրջափակել կառավարության եւ դատախազության շենքերը: «Ես գիտեմ՝ ինչ է տեղի ունեցել 1996-ին, եւ պատասխանատու եմ երկրի կայունության համար», ասաց նա եւ ավելացրեց, որ ինքը ձեռնարկել է այն քայլերը, որոնք անհրաժեշտ էին նմանատիպ դեպքերի կրկնությունը կանխելու համար: Ի դեպ, նշվեց, որ այս անգամ եւս ժողովրդին առաջնորդողների մեջ նույն մարդիկ էին, որոնք եղել էին 1996-ին: Ռոբերտ Քոչարյանը հերքեց դռնփակ դատական նիստերը հերթեց դռնփակ դատական նիստերի մասին տեղեկությունը, ասելով, որ դատավորները սահմանափակել են ներկայությունը, երբ մի քանի պատգամավորներ մտել են նիստերի սենյակ, հայհոյել են դատավորներին եւ փորձել խանգարել նրանց աշխատանքը:

Մամուլի ասուլիսի ժամանակ նախագահը տեղեկացրեց, որ ինքը ստացել է այն ցանկը, որը խոսացել էր տրամադրել Ստեփան Դեմիրճյանը: Այդտեղ նշված էին 8 անձանց անուններ, որոնցից ոչ ոք ընտրվող չի եղել: Ընդ որում, առաջին 2-ն աշխատանքից չեն ազատվել: Նրանք միլիցիայի սերժանտներ են: Ցանկում կային նաեւ «Հայխնայբանկի» աշխատակից, սոցիալական ծառայության ղեկավար, ոստիկաններ եւ այլն:

Եվ վերջապես այն հարցին, թե սահմանադրական փոփոխությունների փաթեթում հնարավո՞ր է ընդգրկել այնպիսի դրույթ, որ հնարավորություն կտար գործող նախագահին վերընտրվել երրորդ անգամ, Ռոբերտ Քոչարյանը պատասխանեց, որ դա բացառվում է: «Նախագահի աշխատանքի պատասխանատվությունն ու ծանրաբեռնվածությունը շատ մեծ են, եւ եթե այդ պաշտոնին ձգտողներից շատերը դա պատկերացնեին, ապա այդպես չէին պայքարի», իր խոսքը եզրափակեց նախագահը:

Մ. Նահանգները շարունակելու է համագործակցությունը Հայաստանի հետ, չնայած նախագահական ընտրությունները մեր երկրում համարում է միջազգային չափանիշներին անհամապատասխան:

Երեկ Հայաստանում ԱՄՆ դեսպան Ջոն Օդդուեյը մամլո ասուլիս էր հրավիրել, ինչպես ինքը մեկնաբանեց, «հերթական անգամ ՁԼՄ-ների հետ շփվելու համար, այնպես որ որեւէ հայտարարություն չունենք»:

Պատասխանելով լրագրողների հարցերին դեսպանը նշեց, թե ժողովրդավարության զարգացման ուղղությամբ Հայաստանի սանձված պարտավորությունները հաշվի առնելով, իրենք հույս ունեին, թե նախագահական անցած ընտրությունները կլինեին մեկ քայլ առաջ: «Դրանք չեղան քայլ առաջ: Ու մենք հիասթափվեցինք, քանի որ այլ սպասելիքներ ունեինք», ասաց ԱՄՆ դիվանագիտական առաքելության ղեկավարը՝ վստահեցնելով, որ իր երկրի պետքարտուղարության հայտարարությունը մեր ընտրությունների վերաբերյալ հիմնվում է ԵԱՀԿ դիտորդական առաքելության եզրակացության եւ «մեր դիտարկումների վրա»:

Լուրջ ընտրախախտումներից Ջ. Օդդուեյը մասնավորեց «քվեատուփերի մեջ մեծ թվով քվեաթերթիկներ լցնելու փաստը»: Լրագրողներից մեկն այստեղ նկատեց, թե ընտրությունները գնահատող հայտարարություններից տպավորություն է ստեղծվում, որ քվեաթերթիկներ լցրել են միայն հաղթած թեկնածու Ռոբերտ Քոչարյանի օգտին:

«Մեր մտահոգությունը եղել են ազատ եւ արդար ընտրությունները: Մենք չենք ուզում անել եզրակացություն, թե այս կամ այն թեկնածուի օգտին է լցվել: Բայց լցնելու փաստն իրնրին կասկածի տակ է դնում ընտրությունների գործընթացի վստահելիությունը»:

Բայց ԱՄՆ-ը շարունակելու է հայաստանի հետ երկարաժամկետ համագործակցության ծրագիրն ու աշխատելու է երկրի այսօրվա կառավարության, նախագահ Ռոբերտ Քոչարյանի հետ: «Սպասվո՞ւմ է արդյոք ԱՄՆ նախագահի շնորհավորական ուղերձը մեր նախագահին վերընտրվելու առիթով» հարցին դեսպանը պատասխանեց. «Չեմ կարող խոսել նախագահ Բուշի անունից եւ ասել, թե երբ եւ ինչ կուղարկի նա նախագահ Քոչարյանին»:

Ընդդիմության հետագա գործընթացների, ըստ ԱՄՆ դեսպանի, պիտի կրեն խաղաղ բողոքի բնույթ՝ հղի սահմանադրության շրջանակներում:

Հետագայում առավել ժողովրդավարական ընտրություններ ունենալու համար իշխանություններն էլ, Օդդուեյի համոզմամբ, պիտի հետամուտ լինեն ընտրախախտումների հեղինակներին պատասխանատվության ենթարկելու գործին: «Նաեւ պիտի վերանայել Ընտրական օրենսգիրքը: Ի վերջո, իշխանությունները պիտի վճռականություն ցուցաբերեն՝ թույլ չտալու համար նման խախտումներ թե՛ մայիսին կայանալիք խորհրդարանական ընտրություններին, թե հետագա ընտրական գործընթացների ժամանակ»:

Եթե այս ընտրություններն էլ «համապատասխանեին միջազգային չափանիշներին եւ չվիճարկվեին որեւէ կողմից, ապա Հայաստանի համար ավելի լայն հնարավորություններ կստեղծվեին, այդ թվում եւ ԼՂ խնդրի առումով»: Վերջինիս վերաբերող հարցերին պատասխանելով՝ ամերիկյան դիվանագետը նշեց, թե ԼՂ ստատուս քվոյի կարգավիճակի փոփոխման համար թե՛ հայասանյան, թե՛ ադրբեջանական հասարակություններում ներհին համաձայնություն է հարկավոր, «իսկ դրա համար ուժեղ, օրինական իշխանություններ են անհրաժեշտ»:

ԼԻԼԻԹ ԳԱԲՐԱԳՅԱՆ

Մ. Նահանգները հիասթափված է, հանգի այլ սպասելիքներ ուներ մեր ընտրություններից



ԵԱՀԿ դիտորդները կհետեւեն Աժ ընտրություններին

ԵԱՀԿ դիտորդական առաքելությունը, որ ամիսներ շարունակ Հայաստանում էր՝ հետեւելու մեր երկրի նախագահական ընտրությունների հետ կապված բոլոր գործընթացներին, մայիսի 25-ին կայանալիք ՀՀ Աժ ընտրությունների ժամանակ եւս կլինի Հայաստանում: Այս մասին երեկվա իր մամլո ասուլիսում նշեց ՀՀ-ում ԱՄՆ դեսպան Ջոն Օդդուեյը: Դեսպանն ասաց նաեւ, որ եթե դիտորդական առաքելությունն աջակցության խնդրանքով դիմի իրենց, ապա, ինչպես եւ այս ընտրություններին, դեսպանատան ներկայացուցիչներն էլ կբերեն իրենց մասնակցությունը եւ հանդես կգան որպես դիտորդներ:

«Փետրվարի 22»-ը մտադիր է պաշտպանել ձերբակալվածների շահերը

Փետրվարի 21-ի հանրահավաքից հետո, 22-ի առավոտյան ձերբակալված եւ ազատ արձակված մարդկանց մի խումբ միավորվել եւ հիմնում է «Փետրվարի 22» հասարակական կազմակերպությունը: Երեկ «Հանրապետություն» կուսակցության շենքում նրանք ասուլիսի էին հրավիրել լրագրողներին՝ հայտնելու իրենց վիրավորանքն այդ օրվա իրադարձությունների առթիվ: Նրանց ձերբակալել են հանրահավաքին հաջորդած երթին մասնակցելու համար, բայց, իրենց պնդմամբ, մի մասը չի մասնակցել դրան, մի մասն ընդհանրապես միտինգի չի մասնակցել, իսկ մասնակցածներին բռնելը նույնպես չի արդարացվում, «քանի որ մենք Եվրախորհուրդ մտնող երկիր ենք եւ այնտեղ խաղաղ երթերին ու ցույցերին մասնակցության համար ոչ ոքի բռնաճնշումների չեն ենթարկում»:

Հիշեցման կարգով ասենք, սակայն, որ այդ մարդկանց մի մասը ձերբակալվել էր ոչ թե ընդհանրապես երթի, այլ չարտոնված երթի մասնակցելու համար: Նորաստեղծ կազմակերպության անդամներ Հայր Մելիոնյանը, Ռոմիկ Մխիթարյանը (Շենգավիթի Ս. Դեմիրճյանի նախընտրական շտաբի կոորդինատոր, երկրապահ), Ժորա Սափեյանը («Հանրապետություն» կուսակցության Թալինի տարածային բաժանմունքի), Վլադիմիր Առաքելյանը («Մեծն Տիգրան» հասարակական կազմակերպության նախագահ) համոզված են, որ իրենց կալանելու պատրվակը միջոց էր՝ նախագահական ընտրությունների երկրորդ փուլին իրենց մասնակցությունը խոչընդոտելու համար, քանի որ բոլորն ակտիվիստներ են, իրենց ընտրատեղամասերում ճանաչված անձինք: Ի դեպ, Ռոմիկ Մխիթարյանը պատկանում էր մի անգամ արդեն դատված ձերբակալվածների շարքին՝ դատարտել էր «անգյուղ սպանության» համար: Նա վրդովմունք հայտնեց, թե ոչ որ բարոյական իրավունք չուներ հիշելու այդ մասին, քանի որ ինքն իր պատիժն արդեն կրել է: Նրանք ժխտեցին նաեւ անկարգություններ արձանագրված լինելու իրողությունը: Հայր Մելիոնյանի ասելով, ինքը երթի ընդհանրապես չի մասնակցել, սակայն չի հասցրել անգամ ասել այդ մասին, դատավարությունը մի քանի վայրկյան է տեւել, եւ մասնակցության փաստը նրան հրամցվել է իբրեւ անժխտելի իրողություն: Նշվեց, որ նրանց մեջ շատ են եղել ազատամարտիկներ, որոնց եւս բռնել են, առանց հաշվի առնելու նրանց վաստակը պատերազմի տարիներին, երբ կռվում էին, որպեսզի այսօր իրենց դատող երիտասարդ դատավորը (տվեց նրա ազգանունը՝ Մարտիրոսյան) այդ ընթացքում կարողանա ուսանել: «Փետրվարի 22» հասարակական կազմակերպության առաջին խնդիրը լինելու է այդ դատավորներից հաշիվ պահանջելը: Նրանք բոլորը պիտի դատի տրվեն, քանի որ մարդկանց բռնել են առանց նրանց մեղքը կամ մեղքի բաժինը ստուգելու եւ աղացուցելու: Հնարավոր է, որ իրենց դատը բողոքարկեն եվրոպական դատարանում, հասնեն մինչեւ Ստրասբուրգ, քանի որ դատական վճիռներում նշված է, որ դրանք բողոքարկման ենթակա չեն:

Կալանվածները պատմում էին, որ շատերին տնից հանել են իբր բաժնում զրուցելու պատրվակով: Ձերբակալություններն պատահականություն չեն նաեւ այն առումով, որ իրենց նախապես տեսախցիկներով լուսանկարել են, եւ ընդհանրապես «միտինգներում շրջում է մասնիչների մի խումբ», որ նկարում է մարդկանց եւ ըստ պատեհության ներկայացնում ներհին գործերի եւ արդարադատության կառույցներին: Այս ենթադրությունը, ճշմարիտ լինի թե ոչ, հենց անմիջականորեն նպաստելու է հասարակության մասնատվածության խորացմանը, կասկածների եւ ատելության վտանգավոր դարձող մթնոլորտի ամրացմանը: Այն, ինչից իբր մտադիր են փրկել ժողովրդին նորաստեղծ կազմակերպության անդամները:

Մամուլի ասուլիսի ժամանակ հնչեցին իշխանությունների ճնշումները դատապարտող հայտարարություններ:

Իսկ այն, ինչ կատարվեց իրենց հետ, խոստովանում են, որ նաեւ իրենց մեղքն է, քանի որ ժամանակին չեն պայքարել իրենց իրավունքների համար՝ խաղաղ լռությունը նախընտրելով: Այժմ սխալը փորձում են շտկել հասարակական կազմակերպության ստեղծմամբ, որը պիտի պատժողի ոչ միայն իրենց, այլեւ նախկինում եւ հետո էլ ձերբակալվածների շահերը:

ԳԱԲՐԻԵԼ ՂԱՆԴԻԼՅԱՆ

ՄԱՍՈՒԼԻ ԱՍՈՒԼԻՍ

Փոփոխություններ բուհական ընդունելության կանոններում

Հայաստանի կառավարության այսօրվա նիստում կհաստատվեն 2003-04 թթ. ուսումնական տարվա անվճար եւ վճարովի ուսուցման համակարգի համար նախատեսված տեղերը: Մասնագիտությունների եւ ընդունելությունների ցանկն, ըստ բուհերի, հաստատվել էր 2002 թ. դեկտեմբերի 5-ին: Ուսումնամեթոդական խորհուրդներն արդեն ճշտել են հարցաշարերի, առարկայական ծրագրերի եւ գնահատման չափանիշների վերաբերյալ ներկայացված առաջարկությունները: Իսկ ընդունելության կանոններին առնչվող մի շարք հարցերի մասին, որ դեռեւս հաստատված չեն, կրթության նախարարության մասնագիտական կրթության վարչության պետ **Ռուբեն Գասպարյանը** խոսեց երեկվա մամուլի ասուլիսում: Այս տարի շարք են մտել մի քանի նոր մասնագիտություններ, որ լրացվել են բարձրագույն կրթության մասնագիտությունների շարքում: Դրանք են աֆտուարի մաթեմատիկա, ագրոբիզնես եւ տուկայաբանություն, ագրարային քաղաքականություն եւ տարածաշրջանային զարգացում, ագրոռլանային համակարգի խորհրդատվություն եւ տեղեկատվություն մասնագիտությունները:

Փոփոխություններ են նախատեսվում մեդալակիրների ընդունելության հետ կապված: Պետպատվեր ուսուցմամբ մեդալակիր դիմորդները նոր ուսումնական տարում բուհ կընդունվեն ընդհանուր մրցույթից դուրս, առանձին մրցույթով՝ հանձնելով բուհի պահանջած ճնշությունն ու ստանալով 19-20 միավոր: Եթե նախկինում մեդալակիրները բուհ ընդունվելիս հանձնում էին դպրոցական ավարտական կենսրոնացված նույն ճնշությունները՝ հայերեն եւ մաթեմատիկա, ապա այսուհետեւ նրանց գիտելիքները ստուգելու նպատակով պարտադիր են բուհի որոշած ճնշությունները: Բացառություն է կազմում մանկավարժությունը եւ մեթոդիկա մասնագիտությունը, որտեղ հաստատվել են մաթեմատիկա եւ հայերեն ճնշությունները: Մեդալակիր դիմորդների ընդունելությունը նախատեսված է ըստ մասնագիտությունների նրանց համար հաստատված տեղերի հաշվին: Կհաստատվի մեդալակիրների անվճար համակարգի 10 տոկոս տեղ՝ հետագայում դրանց չլրացման կամ թափուր մնալու դեպքում վերաբաշխման իրավունքով: Պարզ է, որ ցածր միավորներ ստացած մեդալակիրները կմասնակցեն ընդհանուր մրցույթին:

Հաջորդ հարցը, որին անդրադարձավ պրն Գասպարյանը, վերաբերում էր ծննդական խնամից զուրկ երեխաների բուհ ընդունելությանը: 2002 թ. սեպտեմբերի 24-ին Ազգային ժողովն ընդունեց օրենք ծննդական խնամից զուրկ երեխաների սոցիալական պաշտպանվածության մասին, ըստ որի նրանք բուհ կընդունվեն ընդհանուր մրցույթով, ընդ որում անվճար համակարգ վճարովի համակարգի համար անցումային միավորներ հավաքելու դեպքում:

Սրանք են այն հիմնական փոփոխությունները, որ տեղ կգտնեն այս տարվա բուհական ընդունելությունների կանոններում:

Կրթական բարեփոխումների կենտրոնի տնօրեն **Վիկտոր Մարտիրոսյանը** խոսեց անցած տարվա բուհական ճնշությունների արդյունքների հիման վրա կատարված առաջարկությունների մասին՝ կապված հարցաշարերի, ուսումնական ծրագրերի եւ գնահատման չափանիշների հետ: Նա նշեց, որ բովանդակային առումով դիմորդներին այս տարի որեւէ անակնկալ չի մատուցվի: Որոշակի առարկաների գծով կատարվել են միայն հարցարանների նյութերի վերադասավորումներ, հղկումներ եւ գնահատման չափանիշների ճշգրտումներ: Նա կանգ առավ մի քանի առանցքային հարցերի վրա: Դրանցից մեկը մաթեմատիկայի ճնշության գնահատման չափանիշների շուրջ անցյալ տարի ծավալված խոսակցությունն էր, թե դրանք կոնկրետացված չէին: Այս տարի գնահատման չափանիշները կլինեն հասակ, որպեսզի դիմորդը կարողանա պատմել իր ընտրության մասին:

Հայոց լեզվի ճնշությունը որեւէ փոփոխության չի ենթարկվի: Միայն տեսի կառուցվածքի մեջ կմտցվեն որոշ շտկումներ: Փոփոխություններ կլինեն հայոց պատմության հարցաթերթիկի մեջ. 4 բլոկով կընդգրկվեն չորսական հարցերը՝ յուրաքանչյուրը 5 միավորով: Մասնակի ոչ բովանդակային փոփոխություններ կլինեն անգլերենի հարցատոմսի տարբերակում, ուր կտարվել է առաջադրանքների խմբավորում: Նմանատիպ, ոչ էական փոփոխությունները, նրա խոսքերով, կատարվել են դիմորդին տրամաբանական ավելի պարզ վիճակի մեջ դնելու համար, որպեսզի վերջինս կարողանա արագ կողմնորոշվել, ինչպես նաեւ գնահատման չափանիշները վերանայելու եւ կոնկրետացնելու համար, որպեսզի դիմորդ-ճնշական հանձնաժողով վիճարկումները հնարավորինս նվազեն:

ՌՈՒԶԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Տարածաշրջանի լրագրողները համերաշխ են

Հարավային Կովկասի լրագրողների միջազգային ընկերակցության նախաձեռնությամբ եւ ԵԱՀԿ երեւանյան գրասենյակի ու Գերմանիայի կառավարության աջակցությամբ (50.000 ԱՄՆ դոլար) ստեղծվել է մի ծավալուն գիրք, որն ընդգրկում է հետխորհրդային տարիներին տեղի ունեցած իրադարձությունները, հիմնական միտումները Հարավային Կովկասի տարածաշրջանում: Յուրաքանչյուր երկրի հատկացված է հատուկ բաժին: Գրքի տարբեր բաժիններում ներկայացված են լրատվամիջոցների օրենսդրական կարգավորման, լրագրողների իրավունքների, լրատվամիջոցներ եւ ընկերություններ, տպագիր ու էլեկտրոնային լրատվամիջոցների շուկա, նաեւ ինտերնետային զարգացումներ ու շատ ուրիշ ենթագլուխներ: Գրքի վրա աշխատել են 24 համահեղինակ-մասնագետներ մոտ մեկ տարում, եւ մինչեւ տարվա վերջ լույս կտեսնի նոր հրատարակություն տարածաշրջանների մասին զուգահեռով: Միջոցառմանը մասնակցում էին եւ բարձր գնահատեցին հայաստանյան հարավկովկասյան գրասենյակի ու հայ լրագրողների աշխատանքը Հայաստանում Գերմանիայի Դաշնային Հանրապետության դեսպանի առաջին խորհրդական Պետեր Շոյերը եւ Հայաստանում ԵԱՀԿ դեսպան Ռոյ Ռիվին: Միջոցառմանը ներկա էին համահեղինակները, եւ նրանց հատկին էլ հնչեցին գնահատանքի խոսքեր «Հարավային Կովկաս» լրագրողների միջազգային ընկերակցության խորհրդի անդամ Բորիս Նավասարդյանի կողմից, որն էլ ՁԼՄ-ներին հաջորդ գրքի հրապարակմանը նյութեր տրամադրելու եւ առաջարկություններով հանդես գալու առաջարկ արեց:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱՐԿԱՐՅԱՆ

Հայաստանի ամերիկյան համալսարանը ամերիկյան հավատարմագրման գործընթացներում

1991 թ. իր հիմնադրման օրերից Հայաստանի ամերիկյան համալսարանն անցել է զարգացումների հսկայական ճանապարհ՝ մշտապես կարեւորելով կրթության եւ ակադեմիական կառավարման մեջ հնարավոր բարձրագույն չափանիշներին հասնելը: Մի շարք ուսումնական ծրագրերում (գործարար ղեկավարում, արդյունաբերական ճարտարագիտություն, հաղաքագիտություն, միջազգային հարաբերություններ, հանրային առողջապահություն, իրավագիտություն, համեմատական իրավական ուսմունքներ, անգլերենի դասավանդում) մագիստրոսի աստիճան շնորհված շուրջ 1000 մասնագետների 80 տոկոսն աշխատում է Հայաստանում, ներգրավված լինելով կյանքի տարբեր ոլորտներում՝ պետական կառույցներ, տարատեսակ ներկայացուցչություններ, հատարակական կազմակերպություններ, մասնավոր ձեռնարկություններ եւ այլն:

2002 թ. նոյեմբերը համալսարանի պատմության մեջ իրադարձային եղավ: ՀԱՀ-ին շնորհվեց «Հավատարմագրման թեկնածուի» կարգավիճակ ԱՄՆ դպրոցների եւ քոլեջների արեւմտյան ընկերակցության կողմից: ԴՔԱԸ-ն ԱՄՆ-ում բուհական հավատարմագրում շնորհող վեց տարածաշրջանային ընկերակցություններից մեկն է, որ զբաղվում է ԱՄՆ-ի արեւմտյան մասում գործող բուհերի հավատարմագրության հարցերով: Եվ ահա, այս ընկերակցությունն առաջին անգամ հավատարմագրման կարգավիճակ է շնորհում Մ. Նահանգների տարածից դուրս գտնվող համալսարանին:

Հավատարմագրման գործընթացը ՀԱՀ-ը սկսել է 1998-ից՝ գտնելով, որ արեւմտյան մասնագիտացված կազմակերպության կողմից բուհի ուսումնական ծրագրերի եւ կառավարման համակարգի գնահատումը կարեւոր գործոն կհանդիսանա համալսարանի հետագա զարգացումների համար:

Ինչ անհրաժեշտությամբ էր պայմանավորված հավատարմագրման գործընթացը, ինչպիսի առանձնահատկություններ ուներ եւ ինչ նշանակություն կունենա համալսարանի համար, այս հարցերի շուրջ էր մեր զրույցը ՀԱՀ-ի վարչության նախագահ Անահիտ Օրդյանի հետ:

Հիմնադրումից տարիներ անց, երբ համալսարանի ակադեմիական եւ վարչական ղեկավարները կատարեցին ռազմավարական վերլուծություններ, ի մի բերելով նվաճումները, համախմբելով ֆինանսական միջոցները, եզրահանգեցին, որ կատարելագործելով եւ ավելացնելով ուսումնական ծրագրերը, անհրաժեշտ է ստեղծել կրթական այնպիսի ենթակառուցվածք, որն արժանանա ամերիկյան հավատարմագրմանը: Այս նպատակով Մ. Նահանգների տեղեկատվական գործակալությունից հատկացված դրամաշնորհը համալսարանին հնարավորություն տվեց գործնական քայլեր ձեռնարկել այս ուղղությամբ: Անցած տարիների աշխատանքները՝ հետազոտական ծրագրերի, հատուկ դասընթացների, դասախոսական կազմի, ներհին կարգուկանոնի, ընթացակարգերի կիրառման, ղեկավարման եւ բազմաթիվ այլ ուղղություններով՝ իբրեւ կայացած ուսումնական հաստատություն, վստահություն ստեղծեցին հետագա գործունեությունների համար:

Ի տարբերություն Հայաստանում գործող հավատարմագրման գործընթացի, արեւմտյան չափանիշները եւ ժամկետները տարբեր են. երկարատեւ է, պահանջում է 8 տարի, ներառելով 3 փուլ՝ համապատասխանության կարգավիճակի շնորհում, բակալավրական կարգավիճակի շնորհում եւ հավատարմագրում: ՀԱՀ-ն առայժմ հաղթահարել է երկրորդ փուլը, որ հնարավորություն է տվել համալսարանին նախնական, բայց պատշոնական եւ հանրորեն ճանաչված հարաբերություններ հաստատել ԴՔԱԸ հանձնաժողովի հետ: Պետք է նկատել, որ մինչ հավատարմագրման կարգավիճակ ստանալը, համալսարանն անցավ իսկապես ինքնավերլուծման բարդ շրջան: Համահամալսարանական ինքնաուսումնասիրման, ուժեղ եւ թույլ կողմերի վերլուծության եւ գնահատման երկու տարվա ընթացքում ուսանողները, դասախոսները, ողջ աշխատակազմն ակտիվ մասնակցություն են ունեցել այս գործընթացներին: Համալսարանական բոլոր օղակների ամբողջական, ուղիղ եւ օբյեկտիվ մասնակցության արդյունքում ավելի կատարելագործվեցին ուսումնական ծրագրերը, հատատության ընդհանուր կառուցվածքը: Ներհին էլեկտրոնային ցանցով յուրաքանչյուրը հնարավորություն ուներ իր դիտողությունների վերջնական արդյունքի մասին տեղեկանալու: Կարեւորվել է ամեն աշխատակցի, ուսանողի, վարչական ղեկավարի յուրաքանչյուր ներդրում: Համալսարանում իրագործվող ներհին հրապարակայնությունը բավական դրական ներգործություններ է ունեցել ամենատարբեր առումներով: Չեւավորված աշխատանքային խմբերը բազմազան ճնշարկումներ են ունեցել ամերիկյան հավատարմագրման չափանիշների շուրջ: Համալսարանի մասին ամբողջական տեղեկություններ ստանալու համար ԴՔԱԸ-ի՝ 9 ներկայացուցիչներից բաղկացած հանձնախումբն այցելել է ՀԱՀ, առանձին հանդիպումներ ունեցել ՀԱՀ-ի համայնքի բոլոր հնարավոր օղակների հետ՝ դասախոսակազմ, ուսումնական բաժինների ղեկավարներ, ուսանողներ, աշխատակազմ, շրջանավարտներ: Հանձնախմբի գնահատման ամփոփ զեկույցում ասված է. «ՀԱՀ-ի մագիստրոսի աստիճան շնորհող ծրագրերն անկասկած կարող են բավարարել տաս ամերիկյան համալսարանների համապատասխան ծրագրերին ներկայացվող պահանջները»:

Ամերիկյան հավատարմագրման գործընթացի առանձնահատկությունները

Գլխավոր առանձնահատկությունն այն է, որ մի քանի տարի տեւող գործընթացը ներկայացնում է շարունակական զարգացման ընթացք՝ համահամալսարանական բազմաշերտ վերլուծություններով:

«Ի տարբերություն Հայաստանում գործող անժամկետ հավատարմագրման կարգի, ԴՔԱԸ-ի հավատարմագրումը ժամկետային է: Այսպես, առաջին անգամ հավատարմագրվելիս, ուժի մեջ է լինում 5 տարի ժամկետով, իսկ երկրորդ եւ հաջորդ անգամներից հետո՝ 7-10 տարի ժամկետով: Ամենուս, Հայաստանում միջին եւ բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատությունների հավատարմագրման կարգը սահմանում է պետական հավատարմագրման ուժը կորցրած ճանաչելու պայմանները, մինչդեռ արեւմտյան հավատարմագրման գործընթացն ի սկզբանե սահմանափակում է տվող վկայականի ժամկետը, եւ կարգավիճակի պահպանումն աղահովվում է լրացուցիչ ուսումնասիրության եւ ԴՔԱԸ-ի հանձնախմբի նոր այցի ու գնահատման արդյունում: Այսինքն՝ սա նպաստում է բուհի՝ մշտական զգոն եւ ինքնապահանջկոտ, նաեւ արդյունավետության բարձրացման մշտական ոոնումների վիճակում գտնվելուն», ասում է Անահիտ Օրդյանը:

Տարբերություններ, անշուշտ, կան նաեւ չափանիշների մեջ: Ամերիկյան չափանիշներն ավելի մանրակրկիտ ճնշության են ենթարկվում: 9 չափանիշներ պիտի բավարարի համալսարանը. նախ՝ հատատությունն ազատ մտածելու միջավայր պիտի աղահովի՝ ուսանողին տալով մտքի ազատ դրսեւորման հնարավորություն, վարչական կառուցվածքը, ուսումնական կազմը (որակավորում, փորձառություն), գրադարանային ռեսուրսները, ինտերնետային կայքի որակը, տարածքային, շենքային պայմանները, ֆինանսական պաշարները եւ այլն պիտի համապատասխանեն բավարար չափանիշների:

«ԱՄՆ-ում հատկապես առանձնանում են ըստ հատատության եւ ըստ մասնագիտության հավատարմագրման կարգերը: Հավատարմագրող տարածաշրջանային 6 ընկերակցությունները գնահատում են հատատությունը որպես մեկ ամբողջություն՝ վերոհիշյալ չափանիշների շրջանակներում: Մասնագիտական հավատարմագրումն իրականացվում է համապատասխան մասնագիտական ընկերակցությունների կողմից (ծրագրագծերի, իրավաբանների, տնտեսագետների եւ այլն):

Հավատարմագրման գործընթացին զուգահեռ ՀԱՀ-ը հետամուտ եղավ իր ծրագրերից մեկի՝ միջազգային ընկերակցության կողմից հանրային առողջապահության ծրագրի մասնագիտական հավատարմագրմանը: 2002 թ. հոկտեմբերին ՀԱՀ-ը հյուրընկալեց նաեւ եվրոպական մի շարք բուհերի հանրային առողջապահության ոլորտի վեց փորձագետների, եւ բավարարելով եվրոպական չափորոշիչները՝ դարձավ այդ ընկերակցության անդամը:

Հայաստանում մասնագիտական հավատարմագրման դեպքում կարեւորվում են 2 տարի անընդմեջ շրջանավարտների 60 տոկոսի ատեստավորման դրական արդյունքները, արեւմտյան հավատարմագրման դեպքում կարեւորվում են այն մեխանիզմները, որոնց առկայությամբ կարող են երաշխավորել ուսումնական որակյալ ընթացքի շարունակական աղահովումը», շարունակում է վարչության տնօրենը:

Ինչ կարող է տալ վերջնական հավատարմագրումը ՀԱՀ-ին՝ ՀԱՀ-ի առաջիկա ծրագրերը

Լինելով Կալիֆոռնիայի համալսարանի մասնաճյուղը Հայաստանում՝ ՀԱՀ-ը համապատասխանում է այն չափորոշիչներին, որով գնահատվում է ԱՄՆ արեւմտյան տարածաշրջանի հանրահայտ բուհերի որակը, եւ Հայաստանի ամերիկյան համալսարանն այսուհետեւ կունենա նույն հեղինակությունը, ինչ, ասենք, Բերկլիի կամ մեկ այլ նմանատիպ համալսարան: Սա հնարավորություն կտա առավել ամրապնդելու բուհի ուսումնական ծրագրերն ու ներհին կառուցվածքը: Միջազգային ավելի մեծ հեղինակություն եւ վարկանիշ ունենալով՝ հավատարմագրումը ճանապարհ կբացի նաեւ դաշնային աղբյուրներից դրամաշնորհներ եւ ուսանողական վարկեր ստանալու համար: Այս նոր կարգավիճակը կդյուրացնի սփյուռքահայ ուսանողներին համալսարանում ներգրավելու գործը: Ուսմանը զուգահեռ նրանք առավել կկապվեն հայրենիքի եւ իրենց ակունքների հետ:

Հավատարմագրման վերջին փուլում, որը կտեւի 4 տարի, ավելի մեծ ուշադրության կարժանանան կրթական ծրագրերի, ուսումնական համակարգերի, մեխանիզմների մշակման, կատարելագործման խնդիրները, համալսարանի կառավարման մեջ դասախոսների առավել ակտիվ ընդգրկման խնդիրները, որոնք կաղահովեն հատատության հետագա զարգացման ընթացքը:

ՄԵԼԱՆՅԱ ԲԱԳԱԼՅԱՆ

ԱԶԳ

Միջազգային

Թուրքական «Ենի շաֆաք» թերթը մարտի 10-ի համարում «ԱՄՆ-ի դեմ զայրույթի տեղատարափ» խորագրով անդրադարձել էր Վաշինգտոնում Սոֆիատակ տան առջեւ կազմակերպված ցույցին, որի ընթացքում ամերիկյան ոստիկանությունը ձերբակալել էր 25 կանանց, այդ թվում անվանի գրողներ տկն Ալիս Ուոքերին եւ տկն Սաֆսին Հոնգ Քինգսոնին: Ակամա հարց է ծագում՝ ինչո՞ւ: Այն պատճառով, որ ձերբակալվածները հանդգնել էին հակաիրաքյան պատերազմին դեմ արտահայտվել:

«Ենի շաֆաքը» թուրք ընթերցողի ուշադրությունը հրավիրել էր ձերբակալության դրդապատճառի վրա, կարծես ընդգծելու, որ ԱՄՆ-ն իսկապես ազատությունների երկիր է, որտեղ յուրաքանչյուր ոք ցույցերին մասնակցելիս հակապատերազմական տեսակետներ արտահայտելու եւ ձերբակալվելու իրավունք ունի, միայն թե ձերբակալությունը համապատասխանի ժողովրդավարության միջազգային չափանիշներին:

Չափանիշների հանգամանքը, երբ դրանք միջազգային են, ներկա պահին խիստ այժմեական է թուրք հասարակության համար, որովհետեւ ամերիկյան զորերն առանց թուրքական խորհրդարանի թույլտվության շարունակում են տեղակայվել երկրի տարածքում: Ավելին, Վաշինգտոնը Թուրքիայի հարավարեւելյան շրջաններում 9 նոր ռազմաբազա ստեղծելու արտոնություն է պահանջում թուրքական իշխանություններից:

Թուրքական «Վաքիթ» թերթը մարտի 11-ի համարում առանց խորհրդարանի համապատասխան որոշման ամերիկյան զորերի տեղակայումը համարում է Թուրքիայի տարածքի «օկուպացում»: Ինչ վերաբերում է 9 ռազմաբազաների ստեղծմանը, ապա «Ենի շաֆաքը» նույն օրվա համարում կարծիք է հայտնում, որ ամերիկյան զորերի նպատակն Իրաքը չէ, այլ հենց Թուրքիան, ինչպես նաեւ Եփրատի եւ Տիգրիսի ջրի պաշարների վրա ԱՄՆ-Անգլիա-Իսրայել «չարիքի առանցքի» վերահսկողության հաստատումը:

«Վաքիթը» ջրի պաշարների վերահսկողության միտումը համադրում է Մեծ Արեւելքի նավթի պաշարների վրա իրականացվող վերահսկողության հետ եւ հակաիրաքյան հավանական պատերազմը պայմանավորում է Եհովա աստծո խոստացած ավետյաց երկիրը իսրայելցիներին վերադարձնելու ԱՄՆ-Անգլիա-սիոնիզմ դաշինքի գաղտնի ծրագրով:

Տվյալ դեպքում խնդիրը ծրագիրը չէ, այլ սիոնիզմի շահերին ծառայելու կամ Իսրայելի հետ «չարիքի առանցք» կազմելու մեղադրանքը, որն ԱՄՆ-ի հետ հաստեցագրվում է նաեւ նրա կրտսեր եղբորը Անգլիային: Այլ կերպ, վերոհիշյալ հրապարակումները բնույթով ընդգծված հակաամերիկյան են, իսկ «Վաքիթը» ու «Ենի շաֆաքը», անկախ իսլամամետ ուղղվածությունից, թուրքական թերթեր են: Սա կարեւոր է այն առումով, որ մարտի 1-ին, երբ թուրքական խորհրդարանը մերժեց երկրի տարածքում ամերիկյան զորերի տեղաբաշխման օրինագիծը, վարչապետ Աբդուլլահ Գյուլը, դիմելով Անկարայում ԱՄՆ-ի դեսպան Ռոբերտ Փիրսոնին եւ պետքարտուղար Քոլին Փաուելին, մերժումը պատճառաբանեց ամերիկյան մամուլի՝ Թուրքիայի ազգային արժանապատվությունը վիրավորող հրապարակումներով:

Ըստ երեւույթին, ժողովրդավարության միջազգային չափանիշները պատերազմական վաճինգտոնի համար վեր են ազգային արժանապատվությունից, որ մարտի 9-ին ԱՄՆ-ի դեսպանը Սղերդի պատգամավորական միջանկյալ ընտրությունների ընթացքին հետեւելու համար ամբողջ օրն անցկացրել է «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցության վարչության շենքում, իսկ նախագահ Ջորջ Բուշը նախնական վերջնական արդյունքների հրապարակումը զանգահարել եւ պատգամավոր ընտրվելու առնչությամբ շնորհավորել էր Ռեջեփ Թայիփ Էրդողանին:

Իրաքի դեմ պատերազմ սանձազերծելու հարցում Մեծ Բրիտանիան գլխավոր աջակիցն է: Թեեւ նրա վարչապետ Թոնի Բլերն էրդողանին շնորհավորելու առումով դեռեւս Բուշին չի հետեւել, բայց եւ այնպես, թուրքական թերթերը մարտի 11-ի համարներում ամերիկացիների վրա հարձակումներ գործելիս նրան անմասն չեն թողել:

Դրանցից «Ափքամը» «Բլերի դեմ ընդվզումը ծավալվում է» խորագրով գրում է. «Երբ նա իշխանության եկավ, ոչ միայն իր երկրում, այլեւ ամբողջ աշխարհում սոցիալ-դեմոկրատական շարժման հույսն էր: Բլերի աստղն Իրաքի դեմ որեգրած ագրեսիվ խաղաղասիրության պատճառով հանգչում է նույն ատագությամբ, ինչպես փայլել է»: «Ենի շաֆաքը» ընդգծում է «Բլերի անկման մասին»: Խոսքը տվյալ դեպքում նրա Անգլիայի սահմաններից դուրս առաջ բերած հակազդեցության մասին չէ, ոչ էլ երկրի ներսում ընդդիմության կամ բնակչության լայն զանգվածների մեկուկես միլիոնանոց ցույցերով արտահայտվող դժգոհության, այլ Լեյբորիստական կուսակցության ներսում նրա դեմ կատաղի բնույթ ստացող պայքարի մասին է:

«Ազգը» մարտի 11-ի համարում տեղեկացրել էր, որ Մեծ Բրիտանիայի կառավարության երկու անդամներ եւ նախարարների մի խումբ օգնականներ սպառնացել են հրաժարական տալ, եթե անգլիական ուժերն առանց ՄԱԿ-ի ԱԽ-ի որոշման մասնակցեն հակաիրաքյան պատերազմին: Այդ ընթացքում Լեյբորիստական կուսակցության 122 խորհրդականներ Բլերի դեմ էին քվեարկել:

«Ենի շաֆաքն» էլ վերոհիշյալ հոդվածով տեղեկացնում է, որ Բլերի դեմ քվեարկող խորհրդարանականների թիվը հասել է 200-ի, իսկ հրաժարականի պատրաստվող փոխնախարարներինը՝ 5-ի: Հատկանշական է, որ Բլերի դեմ ընդվզել է նաեւ Լեյբորիստական կուսակցության գլխավոր դեմքերից Թամ Դալյելը: Ըստ թուրքական թերթի, նա ասել է. «ԱՄՆ-ը եւ Անգլիան իրավացի չեն: Կարծում եմ Թոնի Բլերի համար արդեն ուշ է: Վարչապետին պետք է փոխել: Բլերին փոխարինելու համար թեկնածու ենք որոնում: Իրաքի հարցում Գերմանիայի եւ Ֆրանսիայի որդեգրած դիրքորոշումը ճիշտ է: Հույս ունեմ, որ նոր վարչապետը վերջիններիս հետ կբանակցի»:

«Ենի շաֆաքի» այս տեղեկության համար հիմք են ծառայել անգլիական կենտրոնական թերթերը, որոնցից «The Sunday Times»-ը դիմելով Բլերին, նախազգուշացրել է. «Մեր անունից հանդես մի եկեք: Դուք ժողովրդի աջակցությունը չեք վայելում»: Վարչապետ Բլերը հրաժարական կտա՞: Հազիվ թե, որովհետեւ դրա համար անհրաժեշտ է, որ նա զոհաբերություն կատարի ժողովրդավարության չափանիշներից: Մինչդեռ չափանիշները միջազգային են, իսկ Բլերի դեմ անգլիական ընդդիմության, մամուլի, ժողովրդական զանգվածների Լեյբորիստական կուսակցության եւ իր կառավարության անդամների ընդվզումը ներքին խնդիր է: Ահա թե ինչու ամերիկյան վարչակարգը հանուն այդ չափանիշների ծերբակալում է հակաիրաքյան պատերազմի հակառակորդներին, իսկ Թոնի Բլերը նրան հաճոյանալու համար, անկախ համատարած բնույթից, անտեսում ամեն մի ընդվզում: Ըստ երեւույթին դա հասկանում են թուրքական թերթերը, որ նրանց հեգնանքի առարկա են դարձնում:

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

Հանուն ժողովրդավարության չափանիշների ԱՄՆ-ում ցուցարարների ձերբակալում են

Իսկ վարչապետ Բլերն անտեսում է հրաժարականի պահանջը

Ռամսֆելդ. «Կարող ենք կռվել նաեւ առանց բրիտանացիների»

Ամերիկացիները առաջին անգամ խոստովանել են, որ Մեծ Բրիտանիայում իշխող հակապատերազմական տրամադրությունները կարող են ԱՄՆ-ին սպիտել Իրաքի դեմ դուրս գալ առանց բրիտանացիների կամ նրանց չնչին մասնակցությամբ: Լոնդոնի «Ինդիփենդենս» թերթը նշում է, որ Պենտագոնում ելույթ ունենալով՝ ԱՄՆ պատասխանության նախարար Դոնալդ Ռամսֆելդը Մեծ Բրիտանիայում ստեղծված իրադրությունն անվանել է



«յուրօրինակ», ակնարկելով լեյբորիստ 40 պատգամավորների խոյը, որոնք վարչապետ Թոնի Բլերին հրապարակավ կոչ են արել չմասնակցել պատերազմին:

Ռամսֆելդն ասել է, թե պատերազմին Մեծ Բրիտանիայի մասնակցության հարցը մնում է անորոշ եւ զգալի չափով կախված կլինի ՄԱԿ-ում հակաիրաքյան նոր բանաձեւի ընդունումից: CBS հեռուստաընկերության տվյալներով, բրիտանացիների միայն 20 տոկոսն է կողմ պատերազմին Մեծ Բրիտանիայի մասնակցությանը (ԱՄՆ-ում պատերազմի կողմնակիցները կազմում են 55 տոկոս): Հարձակին կարծիքի անտեսումը կարող է ծանր հետեւանքներ ունենալ Թոնի Բլերի կառավարության համար:

ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում բրիտանացիները պատրաստակամություն են հայտնել փոփոխելու հակաիրաքյան նոր բանաձեւի նախագիծը, մասնավորապես եւս 10 օրով երկարաձգելու Իրաքի զինաթափման ժամկետը:

Ռամսֆելդն իր ելույթում ընդգծել է, որ եթե բրիտանացիները չուզենան մասնակցել պատերազմին, ապա ամերիկացիները «կգտնեն այլ ուղիներ»: Նրա խոսքերով, մտածված են բրիտանական զորերի բացակայությունը հաշվի առնող սցենարներ: Չի բացառվում, որ Մեծ Բրիտանիան մի շարք ոչ մարտական առաջադրանքներ կատարի Իրաքի հետպատերազմյան վերակառուցման ընթացքում:

Չնայած Ռամսֆելդի խոսքերին, բրիտանացի պատասխանատուները լավատես են եւ հույս ունեն, որ հակաիրաքյան նոր բանաձեւի օգտին կքվեարկեն ՄԱԿ-ի ԱԽ 9 անդամներ, դրականորեն լուծելով պատերազմին բրիտանական զորերի մասնակցության հարցը: Վաշինգտոնում Մեծ Բրիտանիայի դեսպան Քրիստոֆեր Մեյերը համոզված է, որ ամերիկացիները կարող են Իրաք ներխուժել նաեւ առանց բրիտանացի զինվորների: «Միանգամայն վստահ եմ, որ նրանք պատերազմ կսկսեն ամեն գնով», հայտարարել է նա ամերիկյան «4-րդ ալիքի» թղթակցին:

Ներկայումս Պարսից ծոցում տեղաբաշխված են 200 հազարից ավելի ամերիկացի զինվորականներ: Բրիտանացիների թիվը չի անցնում 25 հազարից:

Պ. Բ.

ԱՄՆ-ում փորձարկվել է ամենահզոր ոչ միջուկային ռումբը

Ֆլորիդայում գտնվող օդուժի էգլին զինափորձարանում հաջողությամբ փորձարկվել է ոչ միջուկային ամենահզոր ավիառումբը: Ասոշիեյթեդ պրես գործակալությունը հաղորդում է, որ C-130 ռազմափոխադրական ինքնաթիռից նետված 9450 կիլոգրամանոց ռումբը պայթել է այնպես, ինչպես նախատեսված էր: Պենտագոնի ներկայացուցիչը հայտնել է, որ նոր ռումբը սպառազինության է առնվելու այս տարի:

Փորձարկումից առաջ օդուժի հրամանատարությունը մերձակա շրջանների բնակիչներին զգուշացրել էր, որ պայթյունի ձայնը լսելի կլինի զինափորձարանից շատ կիլոմետրեր հեռու: Ամերիկացի զինվորականները նոր ռումբը ոչ պատասխանատու անվանում են «ռումբերի մայր»:

CNN հեռուստաընկերությունը նշել է, որ ամերիկացիները չեն հասցրի նոր ռումբը սպառազինության առնել եւ օգտագործել Իրաքի դեմ, բայց հզոր պայթյունի տեսագրությունը կարող է սարսափեցնել Սադդամ Հուսեյնին եւ իրաքցի զինվորականներին, որոնք կհրաժարվեն պատասխանել վարչակազմին: ԱՄՆ զինված ուժերի շտաբների պետերի միացյալ կոմիտեի նախագահ, գեներալ Ռիչարդ Մայերսի խոսքերով, «Իրաքի դեմ կարող է օգտագործվել ամերիկացիների ամբողջ զինանոցը»:

Մինչեւ վերջերս ամերիկյան բանաձեւի ամենահզոր ռումբը 5,5 տոննանոց BLU-82 ավիառումբն էր, որն օգտագործվել է Աֆղանստանում՝ Թորա Բորայի լեռնաձավների պայթեցման ժամանակ:

Նորաստեղծ միջազգային դատարանն արդեն 300 հայց է ստացել

Հաագայից Ֆրանսպրեսը հաղորդում է, որ Միջազգային քրեական դատարանի (ՄՔԴ) 18 դատավորները երեքշաբթի օրը երդում են տվել փաստորեն սկիզբ դնելով դատարանի աշխատանքին, որը ստեղծված է ցեղասպանություններին եւ պատերազմի ոճրագործներին պատժելու համար: Երդմնակալությունից հետո 18 դատավորները միաձայն դատարանի նախագահ են ընտրել միջազգային իրավունքի կանադացի մասնագետ Ֆիլիպ Կիրշին: Հանդիսավոր արարողությանը ներկա են եղել Հոլանդիայի Բեատրիս թագուհին, ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Կոֆի Անանը, մոտ 500 հրավիրյալներ:

Հռոմի 1998 թ. միջազգագրի հիման վրա ստեղծված դատարանի գործունեությանը համաձայնագրեր է ստորագրել իր հաղորդացիներին ՄՔԴ-ի իրավասությունից զերծ պահելու նպատակով:

«Լիբերասիոն» թերթի տվյալներով, դեռ աշխատանքն սկսելուց առաջ դատարանը մոտ 300 հայց է ստացել: Ի տարբերություն նախկին Հարավսլավիայի եւ Ռուանդայի գործերով զբաղվող ՄԱԿ-ի դատարանների, ՄՔԴ-ի առջեւ դատախազին հայցերով կարող են դիմել անհատները, ընկերակցությունները եւ ոչ կառավարական կազմակերպությունները, խնդրելով, որ քննություն սկսվի կոնկրետ փաստերի առթիվ: Ստացված հայցերում առաջին ամբաստանյալները Կենտրոնական Աֆրիկայի Հանրապետության, Կոնգոյի, Փղոսկրի Ափի, Կոլումբիայի զինվորական ու քաղաքական որոշ գործիչներ են, գինյալ խմբեր: Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիան փետրվարի 13-ին ՄՔԴ-ին առաջին հայցն է ներկայացրել գործող պետական ղեկավարներից մեկի՝ Կենտրոնական Աֆրիկայի Հանրապետության նախագահ Անժ-Ֆելիքս Պատասեի դեմ, նրան մեղադրելով 2002 թ. նոյեմբերին՝ պետական հեղաշրջումից հետո կատարած պատերազմական ոճիրների մեջ:

Անանի ջանքերը ձախողվեցին

Հաագայում Կիպրոսի հարցի լուծման հասնելու ՄԱԿ-ի փորձերը վերջնականապես ձախողվեցին, հաղորդում է Նիկոսիայից մեր թղթակից **Ջորջ Տեր-Քարքոզը**: Հոլանդիայի մայրաքաղաքի «Խաղաղության պալատում» ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Կոֆի Անանի հանդիպումները Կիպրոսի նորընտիր նախագահ Թասոս Պապադոպուլոսի եւ թուրքական զավթյալ տարածքի առաջնորդ Ռաուլ Դենկթաշի հետ ոչ մի արդյունքի չեն տվել Դենկթաշի կոչ դիրքորոշման հետեւանքով: Նրան անընդհատ թիկունք են կանգնում Անկարայի իշխանությունները:

Հաագայում ներկա միջազգային բանագնացներն ու դիվանագետները խիստ զայրացած էին այս առթիվ իրենց ժամանակի անհարկի կորստի համար: Երկու ղեկավարների հետ Անանի առանձին հանդիպումների ժամանակ դեռ հույս կար, որ հանրաքվեի անցկացման համար որոշակի համաձայնության կհասնեն: Անանը Կիպրոսի հունական մասի դիրքորոշումից գոհ էր մնացել: Նույնը չի կարելի ասել թուրքական կողմի վերաբերյալ, որն առավել կոշտացել է Թայիփ Էրդողանի հայտարարություններով, որ իբր Անանն է իր խոսքը դրժում: Էրդողանը, որն սկզբնական շրջանում ննջադատում էր Դենկթաշին, այժմ նշել է, որ ՄԱԿ-ի նոր ծրագրի մեջ բացակայում է այն, ինչ իրենք հույս ունեին տեսնել:

ՄԱԿ-ի հատուկ բանագնաց Ալվարո դե Սոտոյի կարծիքով, Անանը մեծապես շահագրգռված էր խնդրի դրական լուծմամբ եւ իր անձնական ներդրումն ուներ այդ հարցում: Հաջորդում գրանք պարզապես պետք է գային նրանք «այո» կամ «ոչ» ասեին առանձին հանրաքվեներ անցկացնելու հարցին: Այժմ այդ ջանքերի ձախողման հետեւանքում հայտնի չէ, թե երբ մի ուրիշ հնարավորություն կընձեռվի անդրադառնալու Կիպրոսի խնդրին:

Կիպրոսում, մյուս կողմից, թուրքական զավթյալ տարածքում հաղթական կուսակցությունները երեք խոշոր ցույցեր են կազմակերպել Դենկթաշի եւ թուրքական կառավարության անջատողական հաղթականության դեմ բողոքելու համար: Նրանք վճռականորեն կողմ են շարունակելու կղզու միավորման ջանքերը եւ հավատացած են, որ Դենկթաշի օրերը հաշված են:

Բայց աշխարհաքաղաքական ներկա իրադարձությունների թոհուբոհում, երբ Իրաքի դեմ պատերազմ է նախապատրաստվում, Դենկթաշի անկումը կարող է հետաձգվել անորոշ ժամանակով:

Մշակույթ

13 հասոր լեցնող ստեղծագործական ոգեկառելի աշխատանքին կողքին, ան նաեւ ժամանակ գտած է երգելու հայ բեմերու վրայ, Ամերիկայի Արեւելեան ափի զանազան քաղաքներու մէջ, Նիւ Եորքէն մինչեւ Պոստոն: «...ոգեաներկան տարիքիս Ամերիկա եկած առաջին օրերէս տեղական յորձանքին խառնուելու փոխարէն, միշտ երգեցի հայերէն: Ահա անցաւ հառասուն տարի, ամէն հանդիսաւոր առիթով ուր որ կանչուեցայ՝ անխտիր երգեցի հայերէն ամէն բեմէ»:

Ահա այս մտաւորականին, բանաստեղծին, վիպագիրին, երաժշտագէտին, հայու աննկուն կամքը ներկայացնող մարդուն, իր ազգին ազնիւ ու հաւատարիմ զաւակին, ամերիկահայ գրականութեան նահատակ Յակոբ Ասատուրեանին արդիւնաբերութեամբ բեղուն կեանքին 100-րդ տարեդարձն էր, որ կը նշուէր մարտի 2-ին, Նյու Ջերսիի Ս. Թովմաս Հայց. եկեղեցւոյ սրահին մէջ, կազմակերպութեամբ Թէմեան Մշակութային Միութեան:

Երեկոն սկսաւ ԹՄՄ-ի Նիւ Եորք-Նիւ Ջերսիի վարչութեան ատենապետ Նորայր Մկրտիչեանի բացման խօսքով եւ Ս. Թովմաս Հայց. եկեղեցւոյ հովիւ Ծ. Վարդապետ Հայր Բարկէն Անուշեանի աղօթքով: Հանդիսավարն էր Բեյսայդի ամէնօրեայ վարժարանի երկարամեայ նախկին տնօրէնուհի, գրող եւ բեմբասաց տիկ. Զարմինէ Պողոսեանը, որ էր նաեւ յուացողն ու պատասխանողը այս ծեռնարկին:

Հանդիսավարը բեմ հրաւիրեց ՈԱԿ Կեդր. վարչութեան անդամ ընկ. Յակոբ Վարդիվառեանը, որ իր սրտի խօսքին մէջ դրսեւորեց Յակոբ Ասատուրեանը որպէս ամերիկահայ եզակի երեւոյթներէն եղող «Նոր Գիր»-եան հռախօսաբան շարժումի հիմնադիրներէն մէկը, ընկերներ Բենեամին Նուրիկեանի, Անդրանիկ Անդրէասեանի, Ալեք Գլըճեանի, Սուրէն Մանուէլեանի եւ այլոց կողքին: Փոստօրէն անունդնէ միակ վերապրողը ներկայիս:

Յայտնի հրապարակագիր, «Հայրենիք» շաբաթաթերթի շրջանակէն Ժիրայր Աթթարեան իր սրտի խօսքին մէջ Յակոբ Ասատուրեանի մասին ունեցած հիացմունքն ու գնահատանքը արտայայտելէ ետք, ողջունեց նահապետին հարիւրամեակը եւ արեւշատութիւն մաղթեց:

Ամերիկայի մէջ ԹՄՄ-ի հիմնադիրներէն հանրածանօթ մտաւորական ընկ. Ա. Փոլատեան, հակառակ առողջական իր ծանր վիճակին, գերագոյն ճիգով մը եկած էր իր յարգանքը մատուցանելու իր բարեկամին եւ երէց գրչեղբօր: Ան իր սրտի խօսքին մէջ ըսաւ թէ Յակոբ Ասատուրեան իր կեանքէն ու գրիչէն մեր մտակոյթին տուած էր շատ բան, «եւ եթէ ալ աւելին չկրցաւ տալ, այսիկա պայմաններու մեղադրանքն էր պարզապէս»:

Յայտնի գեղանկարիչ Քաջագի տիկնոջ՝ Տիկ. Սաթենիկ Քեչեճեանին յանձնուած էր անհնարին պարտականութիւնը հառորդ ժամուան ընթացքին ներկայացնելու Նահապետին գործերը: Տիկ. Քեչեճեան, որ մօտէն կը ճանչնար Յակոբ Ասատուրեանը եւ հետեւած է անոր գրական եւ երաժշտական գործերուն, իրեն հատկանիշ յաճելի ոճով մը իրարու շաղկապելով, կարելիութեան սահմանին մէջ ներկայացուց մեծարեալին բոլոր գործերը:

Օրուան յայտագիրն մաս կը կազմէր նաեւ գեղարուեստական բաժին մը:

Դերասանուհի եւ ռադիոժամի աշխատակից Սեդա Ճեպեճեան արտասանեց Վ. Թէֆէեանի «Քու յիշատակդ այս գիշեր» բանաստեղծութիւնը: Երեւանի Կոմիտասի անուան երաժշտանոցէն շրջանաւարտ Անահիտ Պողոսեան երգեց մեծարեալին պատշած Կոմիտասէն երեք երգ: ԹՄՄ Միհր Մկրտչեան թատերախումբի հիմնադիր դերասաններէն Միսաք Պողոսեան բեմականացուած ձեւով ներկայացուց Նահապետին «Ո՞ւր, Վահրամ» հատորէն «Եղսա Կելինը թատրոն կ'երթայ» կտորին կրճատուած մէկ տարբերակը:

Օրուան յայտագիրը իր աւարտին մօտեցած ըլլալով, հանդիսավարուհին կարդաց անունները բոլոր անոնց, որոնք աշխարհի չորս ծագերէն շնորհաւորագիրներ ուղարկած էին եւ կամ հեռաձայնով շնորհաւորած յորելեարին դարադարձը, որոնց շարքին էին Երուսաղէմի պատրիարք Արք. Թորգոմ Արբազան Մանուկեան, Արեւելեան ափի առաջնորդ Արք. Խաժակ Արբազան Պարսամեան, Ռոմէր Հաստեճեան, Անդրանիկ Սարեան, Զարեհ Մելիճեան, Պարոյր Աղոյաճեան, Գրիգոր Քէօսէեան, Վահէ Սեմերճեան, Սմբատ Տվլէթեան եւ բազմաթիւ ուրիշներ:

Վերջապէս հասած էր ժամանակը լսելու հարիւրամեայ Նահապետը, որուն միտքի պայծառութենէն եւ լեզուի ճարտարութենէն ոչինչ պակսած է: Պէտք եղած շնորհակալական խօսքը ընելէ ետք, ան անդրադարձաւ մինչեւ պատանեկան տարիքը՝ իր անցուցած դժուարին օրերուն: Իրեն համար ամէնէն կարեւորը հայ գրականութիւնը, հայ երաժշտութիւնը եւ հայ մշակոյթը եղած էին միշտ: «Ես իմ առաւելագոյնս տուի ազգիս: Տուի սիրով, տուի հաւատքով», ըսաւ մեծարեալը:

Մեր Նահապետը՝ Յակոբ Ասատուրեանը արժանի է բոլորիս ակնածանքին, անխառն սիրոյն եւ գուրգուրանքին, իր շատ սիրած հայ ժողովուրդին թողած գրական եւ երաժշտական վաստակին համար: Իր կտակին արժանի ըլլալը իմնին մարտահրաւէր մըն է նոր սերունդին եւ մեզի համար: Բախտաւոր կը զգանք, որ անգամ մը եւս իր ներկայութիւնը վայելելու առիթը տրուեցաւ մեզի, որուն համար շնորհակալ ենք Թէֆէեան մշակութային միութեան Նիւ Եորք-Նիւ Ջերսիի մասնաճիւղին, եւ այս ծեռնարկին համար աշխատող բոլոր թէֆէեանցիներուն, մասնաւորաբար Զարմինէ Պողոսեանին եւ Յակոբ Վարդիվառեանին:

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՏԻՐԱՑՈՒԹԵԱՆ
Նիւ Ջերսի

Տարիրամեակ՝ Յակոբ Ասատուրեանի

Յակոբ Ասատուրեան: Մարմնացում վերադրումի: Տիպար իմնակերտումի: Նշանակ նուիրումի հայ գրականութեան եւ երաժշտութեան:

Զարդէն մազապուրծ, դառն յիշատակներով լեցուն, անապատներու եւ որբանոցներու մէջ հաշտուած մանկութիւն մը ունեցող պատանի մը՝ բախտը ի վերջոյ կը նետէ գիմի Ամերիկա, ուր կեանքը կ'ունենայ գլխաւորաբար երկու բաժին: Առաջինը դժուարին պայմաններու տակ աղահովել օրապահիկ մը, եւ երկրորդը՝ իմնաշխատութեամբ սորվիլ մայրենի լեզուին ուրթութիւնները եւ այդ լեզուով ալ մշակել գրականութիւն եւ նուիրուիլ հայ երաժշտութեան: Եւ տակաւին լաւագոյնս յաջողիլ յաջողիլ եւ գերազանցել երկու մարզերուն մէջ ալ:

Ո՛չ առասպել մը չէ ասիկա: Իրակա՛ն կեանք: Կեանքը Յակոբ Ասատուրեանին:

«Աղուոր կեանքը վազող ջուրի նման է. երբեմն ջինջ, երբեմն պղտոր: Իմ սերունդիս կեանքը դժբախտաբար, զուարթ հարսանիք մը չեղաւ: Իրեն բաժին իննսածը, իր աղուոր երազները խմորողը պղտոր ջուրերն եղան կեանքի»:

Ց. Ա.

«Դավիթը» մարմրում է

1504 թ. Միքելանջելոն ավարտեց իր հզոր գործերից մեկը «Դավիթը», որը տեղադրվեց Ֆլորենցիայի քանգարանում: 5 մետրանոց հսկա այս գործը մինչեւ օրս էլ հիացնում է Իտալիայի «արվեստների հաղար»: Ֆլորենցիա այցելած բազմամիլիոն այցելուների: Հասկանալի է, որ Միքելանջելոյի այս գործի պահպանման համար հսկայական աշխատանք պետք է կատարվեր: Այդպես էլ եղել է: Բացի ամենօրյա հսկողությունից ու խնամից, արձանն առաջին անգամ մարմրել է 1873 թ.:

Այժմ նորից «մարման աշխատանքների» հարկ կա: Եվ վերականգնող Ագնես Պարոնյին զբաղված է այս գործով: Գիտական նորագույն տեխնիկայով զինված վերականգնողը զուտ տեխնիկական աշխատանք չի կատարում: Նրա աշխատանքը պայմանավորված է ոչ միայն հանդակի վրա եղած ավելորդությունները վերացնելով, այլեւ նրանով, որ ոչինչ չպակասի Միքելանջելոյի հանճարեղ գործից:

Ս. Գ.

LՈՒՅՍ Է ՏԵՍԵԼ

Երկփեղկված սրտի սերը

Անահիտ Բոսանջյանի նոր ժողովածուն

Անահիտի ժողովածուն բաժանված է ենթաբաժինների, որոնք միասնաբար բովանդակում, շարժման մեջ են դնում բանաստեղծուհու մտքի ընթացքը: Կռվում են հոգին ու մարմինը, հետո միաբանվում են խաղաղության կարով: Մարմինը, իբրեւ պատյան, շիկանում է հոգու կրակներով ու երկուսի միասնական այրումից ծնվում են հոգեւոր պտուղներ, որ, ահավասիկ, այս բանաստեղծություններն են: Սիրե՞լ, թե՞ չսիրել: Չսիրելու համար առիթներ ու պատճառներ շատ կան, մեղքը հոսում է աշխարհով: Բանաստեղծուհին, ահա, դեռեւս մանկությունից գիտակցել է իր առաքելությունը. «Օրս արդեմ ազգիս բախտով»: Սա ուխտապայման է:

Ինչպես ամեն մի անհատի, այնպես էլ Անահիտ Բոսանջյան բանաստեղծուհու հոգու բռնկումը սիրո կայծից է: Բնական է հարցումը. «Որտեղի՞ց եկար, սիրո ի՞նչ հունից, /Որ այսպես վարար, այսպես ողինդով, /Լցրել ես կյանքիս ծալքերը բոլոր»: Հետո՞: Հետո գալու է ափսոսանքով շաղախված կարոտը. «Ո՞ւր է արդյոք հիմա առավոտն այն տաք»: Սերն էլ որ կա, բազմաբերն է ու բազմաբնույթ, մարմնական ու հոգեւոր տարածքներ ունի: Սեր կա, գալիս եւ անցնում է՝ հիշեցնելով կրակ, որ հանգչում է թեթեւ ծխուց: Սեր էլ կա, բռնկվում է շարունակ: Բանաստեղծի սերը շարունակ բռնկվող է: Հոգին մաղող, աղոթի տանող մի սեր էլ կա, որ կոչվում է մայրական: Փոթորիկն անգամ ի զորու չէ հանգցնելու մոր սիրո կրակը: Այն բոլոր բաները, որ գալիս են մորից, շաղախված են սիրով: Մայրը ծածուկ վերէրէ էլ ունի, որոնք անտեսանելի են. «...Փակ են, ներսից են /Ոչ ոք չի տեսնում»:

Սերը բարի է դարձնում մարդուն, ճանի որ բխում է բարությունից: Եվ որքես բխումն բարության, բանաստեղծուհին պարզում է հոգին, պարզում ու բաշխում է հոգին. «Կրկին հոգիս եմ շաղում»: Իսկ ի՞նչ է ցավը: Մի անհրաժեշտ, նաեւ անխուսափելի բան, ուրախության պես բնական մի բան. «Իմ տված ցավը վերադարձրու ինձ»: Ինչո՞ւ ոչ թե ուրախությունը, այլ ցավն է ուզում: Ահա պատասխանը. «Որ ես վերջապես մարդանամ կրկին»:

Աշխարհի ճամփեքին, անշուշտ, բանաստեղծուհին միտք է անում, թե վերջապես ո՞րը պիտի ընտրի եւ «դեպի ո՞ւր պիտի գնա»: Եվ ահա այստեղ է, որ ուժգնորեն հնչում է իր ներսի ձայնը. «Հայաստան իմ, երկիր իմ»: «Տառապանքով օծված խաչքար»: «Ինձ օղակած շղթա, Հայաստան աշխարհ»:

Բանաստեղծուհու սիրտը երկփեղկված է, ճանի որ թե՛ մարմնական եւ թե՛ հոգեւոր առումով, Վրաստանի ու Հայաստանի ճամփեքին է: Եվ այդ ճամփաներն, ի վերջո, կամուրջներ են դառնում: Այդ կամուրջներով օրհնանքն ու սերն են անցնում. «Ես՝ չվող կռունկս, /Ձեր սպասած խաբրիկն եմ բերել»:

Մասնավոր զգացո՞ւմ, իհարկե, ունի. «Դու ես դուռը մեր հույսի»: Խոսքն Արարատին է վերաբերում, ասել է թե՝ վերաբերում է հայ ժողովրդի հոգուն ու ոգուն. «Դու հառնում ես, որ հայ մնանք»: Իսկապես հրաշալի է, ճանի որ կյանք-կենդանությունը վերեւից է, եւ հավիտենության խորհուրդը վերեւ նայելու մեջ է, հառնելու մեջ: Այս վերեւ նայելը սկսվում է խոնարհությունից. Անահիտն աղոթում է ծառի օրենքով, նախ՝ արմատով իջնել, խորանալ եւ ապա սաղարթով ելնել, տարածվել, խոյանալ: Սա է հավիտենության օրենքն ու օրհնաչափությունը:

Եվ այսպես, կամուրջներ կապող եւ կամուրջներ անցնող բանաստեղծուհին մենակ չէ, ինքն իրենով չէ, մոր աչքի առաջ է, լեցուն է անձի՝ ազգի ու ժողովուրդների սիրով եւ նրա երկփեղկվածությունը կատարելության է տանում, ճանի որ կաղը սիրով է: Եվ այն երգերը, որ նա պարգեւում է մեզ, ոչ այլ ինչ են, եթե ոչ երկփեղկված սրտի սիրուց ծնված հոգեւոր պտուղներ, որոնք ոչ միայն ուրախություն են, այլեւ՝ սղեղանի: Անահիտ Բոսանջյանը լինել-չլինելու հավիտենական խնդիրը լուծում է լինելիությամբ՝ առաջնորդվելով աշխարհի ու մարդու նկատմամբ ունեցած ատվածատուր սիրո շնորհներով:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀՈՎՆԱԹԱՆ

«Ամազոնուհին» հայ բեմում

Մարտի 10-ին եւ 12-ին Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի թատրոնում փայլուն անցավ ֆրանսաբնակ մեր հայրենակցուհի, հայտնի երգահան Էժենի Ալեսյանի «Ամազոնուհի» կամերային օպերայի հայատանյան պրեմիերան:

Էժենի Ալեսյանը ծնվել է հայ երաժիշտների ընտանիքում: Երեք տարեկանում Փարիզի հայտնի հայերգասահներից մեկում իր առաջին ելույթից հետո շրջագայել է աշխարհով մեկ եւ սկսել ստեղծագործել: Նրա երաժշտությունը ճանապարհի խաչմերուկի հեռավորություն է եւ ժամանակի ներգործություն, որտեղ անձնական հույզերը եւ զգացողություններ առաջնային տեղ են գրավում երաժշտության արտահայտման մեջ: Գերված լինելով հայկական մեղեդիներով, ինչպես նաեւ էժենին, նրա ստեղծագործությունների մեջ հնչում են արեւմտյան դասական երաժշտության հնչյունները: Նա ոչ միայն կոմպոզիտոր եւ դաշնակահարուհի է, այլեւ դասախոսում է եւ ակտիվորեն խոսում երաժիշտներին կազմակերպելով հյուրախաղեր, ձայնագրություններ: Էժենին գրել է բազմաթիվ դաշնամուրային ֆանտազիաներ, սիմֆոնիկ վարիացիաներ, երգեր, սիմֆոնիկ բալլադ, նաեւ «Ախթամար» բալետն ու առաջին անգամ՝ կամերային օպերա «Ամազոնուհի»:

Ավարտվեցին օպերայի հայատանյան պրեմիերաները, որոնք անկարագրելի տպավորություն թողեցին հանդիսատեսի վրա: Ներկայացման ավարտին բեմ բարձրացավ Հայաստանում Ֆրանսիայի դեսպան Գյունին ու նշեց, որ օպերան Ֆրանսիայի նվերն էր հայ հրաշալի ու գեղեցիկ կանանց՝ իրենց տոնի առթիվ: Անգլերենի մասնագետ Զառա Ջանոյանն առանց ֆրանսերեն հասկանալու հիացած էր ներկայացումից, դերասանական խաղից, որը բացահայտում էր ներկայացման սյուժեն:

Լուսինե Չեբերյանի կարծիքով կամերային օպերայի պրեմիերան մեզանում նոր ոճ եւ նոր մատուցման ձեւ էր: Կատարման մակարդակով բարձր էր եվրոպական շատ օպերաներից: Այս մի քանի ամիսների ընթացքում ընտրություններից ու միտինգներից հետո այս օպերան մարեց մեր հոգիները ու մեծ բավականություն պատճառեց: Ցավում եմ, որ երկու անգամ խաղացին, քանզի հայ ժողովուրդը նման հոգեւոր սննդի կարիք ունի հենց հիմա:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱՔԱՐՅԱՆ

ՀԵՄՊԻՈՆԵՐԻ ԼԻԳԱ

«Բարսելոնի» հաջողությունն օրինաչափ է

Ֆուտբոլի չեմպիոնների լիգայի խմբային մրցաշարի 5-րդ տուրն անվանեց հառորդ եզրափակիչի եւս մեկ մասնակցի: «Մանչեսթր յունայթեդից» ու «Միլանից» հետո պայմարը շարունակելու իրավունք ստացավ նաեւ «Բարսելոնը»: Իսպանական ակումբն առանց մեծ ճիգերի սեփական հարկի տակ պարտության մատնեց «Բայերին»: «Բարսելոնի» հաջողությունն օրինաչափ է. չեմպիոնների լիգայում իսպանացիները տոնել են 12 հաղթանակ, մեկ խաղ ավարտել ոչ-ոքի: Իսկ ահա, «Բայերը» 5-րդ անընդմեջ պարտությունը կրեց: Ճիշտ է, խաղասկիզբն անցավ հյուրերի աջակցությամբ: Արդեն առաջին րոպեին բրազիլացի Ֆրանսան վրիպեց հարմար դիրքից, հետո հաշիվը բացելու լավ հնարավորությունը ձեռքից բաց թողեցին Բերբատովն ու Շիմակը, իսկ մի դրվագում մրցավարը կարող էր 11 մ հարված նշանակել դեպի «Բարսելոնի» դարպասը: Ի տարբերություն հյուրերի, «Բարսելոնի» առաջին վտանգավոր գրոհը 17-րդ րոպեին ավարտվեց Սավիոլայի դիպուկ հարվածով: 49-րդ րոպեին Դե Բուրն ամրագնեց թիմի հաղթանակը՝ 2-0:

2-րդ ուղեգրի համար կարեւոր նշանակություն ուներ «Ինտեր»-«Նյուքասլ» հանդիպման արդյունքը: Հաղթանակի դեպքում իտալացիները ժամկետից շուտ կվաճեին ուղեգիրը: Սակայն «Ինտերը» կարող էր նույնիսկ պարտվել: «Նյուքասլի» կազմում իրեն գերազանց դրսեւորեց Ալան Շիրերը: Նա 42-րդ րոպեին բացեց հաշիվը, իսկ ընդմիջումից հետո 3 րոպե անց նա կրկին առաջ մղեց «Նյուքասլին»,

AP-PHOTOLURE

ֆանի որ մինչ այդ «Ինտերի» ռմբարկու Վիերին հավասարեցրել էր հաշիվը: «Ինտերին» հաջողվեց կրկին վերականգնել հավասարակշռությունը՝ շնորհիվ Կորդոբայի խփած գոլի:

Եթե «A» խմբում մրցաշարային իրավիճակը պարզվեց, ապա «B» խմբում ամեն ինչ կվճռեն ավարտական տուրի հանդիպումները: Երկու խաղերում էլ գրանցվեց միեւնույն 1-1 հաշիվը: «Արսենալի» հետ խաղում «Ռոման» 22-րդ րոպեին մնաց 10 հոգով: Կիրունին հարվածելու համար դաշտից հեռացվեց Ֆրանչեսկո Տոտին: Մինչ այդ, 12-րդ րոպեին անկյունայինի խաղարկումից հետո Պատրիկ Վիեռան գլխի հարվածով բացել էր հաշիվը: Չնայած թվային առավելությանը, «Արսենալը» չկարողացավ պահպանել հաղթական հաշիվը: Առաջին խաղակեսի ավարտին Կասանոն մեն-մենակ հայտնվելով դարպասի դիմաց, վերականգնեց հավասարակշռությունը:

«Այաքս»-«Վալենսիա» խաղում հաշիվը 28-րդ րոպեին 11 մ հարվածով բացեց իսպանացի Կիլի Գոնսալեսը: Ընդմիջումից հետո «Այաքսը» տիրեց նախաձեռնությանը եւ 57-րդ րոպեին Պասանենը թիմին փրկեց պարտությունից:

Մրցաշարային աղյուսակներ

«A» խումբ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Բարսելոն	5	4	1	0	10-2	13
2. Ինտեր	5	2	2	1	9-8	8
3. Նյուքասլ	5	2	1	2	10-11	7
4. Բայեր	5	0	0	5	5-13	0

«B» խումբ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Այաքս	5	1	4	0	5-4	7
2. Արսենալ	5	1	4	0	5-3	7
3. Վալենսիա	5	1	3	1	3-5	6
4. Ռոմա	5	1	1	3	6-7	4

Ռեկորդներ եւ ռեկորդակիրներ

Ֆուտբոլի եվրոպական գավաթների խաղարկությունները վաղուց ի վեր մեծ հեղինակություն են վայելում ֆուտբոլիստների եւ մարզասերների շրջանում: Դա հատկապես վերաբերում է 1956 թ. անցկացվող չեմպիոնների գավաթի մրցաշարին: 1992 թ. կազմավորվեց չեմպիոնների լիգան, որի առաջին հանդիպումները (խոսքը վերաբերում է խմբային մրցաշարին) կայացան այդ տարվա նոյեմբերի 25-ին Գլազգոյում, Բրյուգեում, Միլանում եւ Պորտոյում: Չեմպիոնների լիգայի 11-ամյա պատմության ընթացքում խմբային 2-րդ մրցաշարի 4-րդ տուրում տեղի ունեցավ հոբելյանական՝ 1000-րդ խաղը (որակավորման փուլի հանդիպումները հաշվի չեն առնվում): Այսօր արդեն չեմպիոնների լիգայում անցկացվել է 1008 հանդիպում: Թիմերից բոլորից շատ խաղ է անցկացրել «Մանչեսթր յունայթեդը»՝ 89, իսկ ֆուտբոլիստներից այդ թիմի խաղացող Նեւիլը՝ 76: Բոլորից հաջող է հանդես եկել չեմպիոնների գավաթի 9-ակի հաղթող Մադրիդի «Ռեալը»՝ տոնելով 50 հաղթանակ: Իսկ բոլորից շատ պարտություն է կրել «Գալաթասարայը»՝ 29: Արձայական ակումբի ֆուտբոլիստները չեմպիոնների լիգայի ամենաարդյունավետ խաղացողներն են (178 գոլ), որոնցից լավագույն ռմբարկուն Ռաուլն է (39 գոլ): Մեկ խաղարկության ընթացքում չեմպիոնների լիգայի խմբային մրցաշարում բոլորից շատ գնդակներ են խփել Ռուդ վան Նիստելրոյը («Մանչեսթր յունայթեդ», 2001/02, 2002/03 թթ.), Ալեսանդրո Դել Պիերոն («Յուվենտուս», 1997/98 թթ.), Ժարդելը («Պորտո», 1999/2000 թթ.), Ռիվալդոն («Բարսելոն», 1999/2000 թթ.) եւ Ռաուլը («Ռեալ», 1999/2000 թթ.)՝ 10-ական: Ինչպես տեսնում եք, վան Նիստելրոյն արդյունավետության ռեկորդ սահմանելու լավ հնարավորություն ունի:

Բոլորից հաճախ՝ 8-ական անգամ չեմպիոնների լիգայի մրցաշրջանից մասնակցել են «Բարսելոնը», «Մանչեսթր յունայթեդը», «Գալաթասարայը», «Պորտոն», Մոսկվայի «Սպարտակն» ու «Ռուսենբորգը»: Իսկ երկրներից 9 թիմ է ներկայացրել Ֆրանսիան: Մոսկվայի «Սպարտակը» տխուր ռեկորդների հեղինակ է: Թիմը բաց է թողել բոլորից շատ՝ 97 գնդակ, 17 խաղ շարունակ չի կարողացել հաղթել: «Ֆեներբահչեի» հետ սպարտակցիները 7-ական անընդմեջ պարտություն են կրել: Իսկ ահա, «Բարսելոնն» ընթացիկ խաղարկությունում անընդմեջ տոնած հաղթանակների հաշվով (9) նոր ռեկորդ սահմանեց: «Բավարիան» ու «Այաքսը» 19-ական խաղ ընթացել են առանց պարտության: Յուրօրինակ ռեկորդ է սահմանել «Չելսին» 2000 թ.: «Լացիոյի» հետ խաղում թիմի մեկնարկային կազմի բոլոր ֆուտբոլիստները լեգեոներներ էին: Իտալացիների կազմում դաշտ էր դուրս եկել 7 լեգեոներ, այնպես որ, այդ խաղում 18 լեգեոներ էր հանդես գալիս, ինչը եւս ռեկորդային ցուցանիշ է:

Ժամկետները հայտնի են

ՈՒԵՖԱ-ն հաստատել է 2003/04 թթ. եվրագավաթների խաղարկության խաղացանկը: Չեմպիոնների լիգայի որակավորման 1-ին փուլի հանդիպումները կկայանան հուլիսի 16-ին եւ 23-ին, 2-րդ փուլի խաղերը՝ հուլիսի 30-ին եւ օգոստոսի 6-ին, 3-րդ փուլը տեղի կունենա օգոստոսի 12, 13-ին եւ 26, 27-ին: Չեմպիոնների լիգայի խմբային մրցաշարի 1-6-րդ տուրերն ըստ հերթականության կանցկացվեն սեպտեմբերի 16-17-ին, սեպտեմբերի 30-ին եւ հոկտեմբերի 1-ին, հոկտեմբերի 21-22-ին, նոյեմբերի 4-5-ին, 25-26-ին, դեկտեմբերի 9-10-ին: Այս մրցաշրջանից չեմպիոնների լիգայի խմբային 2-րդ մրցաշարն այլեւս չի անցկացվելու: 8 խմբերի 2-ական լավագույն թիմերը պայմարը կշարունակեն 1/8 եզրափակիչում, որի խաղերը տեղի կունենան 2004 թ. փետրվարին: Նախկինի պես որակավորման 3-րդ փուլի անհաջողակները կմասնակցեն ՈՒԵՖԱ-ի գավաթի խաղարկությանը, որի մեկնարկը կտրվի օգոստոսի 14-ին: 2 շաբաթ անց կանցկացվեն պատասխան հանդիպումները: Սեպտեմբերի 24-ին եւ հոկտեմբերի 15-ին տեղի կունենան 1/64 եզրափակիչի խաղերը: 1/32 եզրափակիչը կկայանա նոյեմբերի 6-ին եւ 27-ին: 1/16 եզրափակիչի հանդիպումները տեղի կունենան արդեն հաջորդ տարվա փետրվարին:

Աշխարհի առաջնությունը հետաձգվում է

Իրաքի դեմ ԱՄՆ-ի հնարավոր պատերազմի հետեւանքով ՖԻՖԱ-ն հետաձգել է մարտի 25-ից ապրիլի 16-ն Արաբական Միացյալ Էմիրություններում կայանալիք ֆուտբոլի աշխարհի երիտասարդական 20-րդ առաջնությունը: Մրցաշարի անցկացման նոր ժամկետը կորոշվի ավելի ուշ: Ընդ որում, ՖԻՖԱ-ի նախագահ Ջեոֆ Բլաթերը հայտարարել է, որ առաջնությունն այլ երկիր չի տեղափոխվի, ինչպես խնդրում են մասնակից որոշ թիմեր, առաջին հերթին ԱՄՆ-ի եւ Անգլիայի հավաքականները:

ՇԱԽՄԱՏ

Վրաց շախմատիստները գլխավորեցին աղյուսակը

Շախմատային «Չեսս» ակադեմիայում շարունակվում է շախմատի մրցաշարը: Հինգերորդ տուրում անհաջողության մատնվեց առաջատարը՝ Արման Փաշիկյանը: Դավիթ Հարությունյանի հետ մրցավեճում Արմանը մրցաշարում իր առաջին պարտությունը կրեց: Դա հնարավորություն տվեց վրաց շախմատիստներ Վալերիան Գափրինդաշվիլուն եւ Դավիթ Շենգելիային 4-ական միավորով սանձնելու առաջատարի դերը: Մասնակիցներից ամենաբարձր անհատական վարկանիշ ունեցող Գափրինդաշվիլին (2491) հաղթեց Վահագն Խաչատրյանին, իսկ Շենգելիան պարտության մատնեց Դավիթ Պետրոսյանին: Գրոսմայստեր Լիլիթ Մկրտչյանը հաղթեց Գեւորգ Հարությունյանին: Չորս անընդմեջ պարտություններից հետո իր առաջին հաղթանակը տոնեց Զավեն Անդրեասյանը՝ առավելության հասնելով Լիլիթ Գալոյանի նկատմամբ: Միակ ոչ-ոքին գրանցվեց Մարջորի եւ Տիգրան Պետրոսյանի մրցավեճում:

6-րդ տուրում առաջատարները նոր հաղթանակներ տոնեցին. Գափրինդաշվիլին շահեց Տիգրան Պետրոսյանի հետ պարտիան, իսկ Շենգելիան պարտության մատնեց Դավիթ Հարությունյանին: Վերջապես հաղթանակի ճաղգրությունը ճաշակեց Լիլիթ Գալոյանը՝ իր օգտին միավոր գրանցելով Դավիթ Պետրոսյանի հետ մրցավեճում: Մկրտչյան-Անդրեասյան, Փաշիկյան-Խաչատրյան պարտիաները խաղաղ ելք ունեցան: Գեւորգ Հարությունյանը հաղթեց Մարջորին:

6 տուրից հետո 5-ական միավորով աղյուսակը գլխավորում են Գափրինդաշվիլին ու Շենգելիան: Նրանց մեկ միավորով են զիջում Մկրտչյանն ու Փաշիկյանը: 3 միավոր ունի Դավիթ Հարությունյանը: Մյուս մասնակիցների ցուցանիշներն այսպիսին են. Մարջոր, Դավիթ Պետրոսյան, Վահագն Խաչատրյան՝ 2,5-ական, Տիգրան Պետրոսյան, Գեւորգ Հարությունյան, Լիլիթ Գալոյան՝ 2-ական, Զավեն Անդրեասյան՝ 1,5 միավոր:

Անհաջող մեկնարկ

Ինդիան Ուելսում մեկնարկել է թենիսի խոշոր մրցաշար, որի մասնակիցների թվում են նաեւ Սարգիս Սարգսյանն ու Դավիթ Նալբանդյանը: Ցավոք, երկուսն էլ անհաջողության մատնվեցին մեկնարկում: Սարգիսը զիջեց Խուան Կառլոս Ֆերերոյին (4-6, 7-6, 4-6), իսկ Դավիթ Նալբանդյանն առաջին մրցախաղում ուժերը չափեց Խուան Իգնասիո Չելայի հետ (6-4, 4-6, 5-7): Մրցաշարը հաջող սկսեցին ռուս թենիսիստները: Եվգենի Կաֆելնիկովը պարտության մատնեց Ռադեկ Ստեպանեկին (4-6, 6-1, 6-1), իսկ Մարաս Սաֆինը հաղթեց Շտեֆան Կոուբեկին (3-6, 6-3, 7-5): Բելառուսցի Մախիմ Միրնին էլ մտավ հաջորդ փուլ՝ հաղթահարելով Ուելս Ֆերեյրայի դիմադրությունը (7-6, 6-3): Հաջորդ փուլ դուրս եկան նաեւ Մալիսը, Կիֆերը, Շալկենը, Կալերին, Նովակը, Ռոխուսը, Ջինեպրին, Կոստան, Կորեխան, Կլեմանը եւ Սոեյդին:

Չեմպիոնի կոչումը պահպանել չհաջողվեց

Ուկրաինացի բոքսամարտիկ Վլադիմիր Կլիչկոյին չհաջողվեց 6-րդ անգամ անընդմեջ պահպանել գերծանր քաշային կարգում բոքսամարտի համաշխարհային կազմակերպության վարկածով աշխարհի չեմպիոնի կոչումը: Կլիչկոն պարտվեց 36-ամյա հարավաֆրիկացի բոքսամարտիկ Կորի Սանդերսից: «Պրետորիա Արենա» մարզադահլիճում անցկացված մենամարտին հետեւում էին 11,5 հազար հանդիսատեսներ: Հանդիպման նկատմամբ հետաքրքրությունը մեծ էր, քանի որ Վլադիմիր Կլիչկոն բոքսամարտի միջազգային ֆեդերացիայի վարկածով չեմպիոնի կոչման գլխավոր հավակնորդն է եւ մեկ անգամ չէ, որ ցանկություն է հայտնել մենամարտել անգլիացի Լենոս Լյուիսի հետ: Ուկրաինացի բոքսամարտիկի մենեջեր Կլաուս Պիտեր Կոլը մենամարտի համար ընտրել էր բոքսամարտի համաշխարհային միության վարկածով աշխարհի նախկին չեմպիոն Սանդերսին, որը բարձրագույն տիտղոսին տիրել էր 1997-2000 թթ.: Կլիչկոն լավ ծանոթ էր մրցակցի ուժեղ եւ թույլ կողմերին, քանի որ վերջինս օգնել էր նրա ավագ եղբորը՝ Վիտալի Կլիչկոյին Հերբ Հայդի եւ Կրիս Բերդի հետ մենամարտերին նախապատրաստվելիս: Բայց դա չօգնեց նրան հաղթելու մրցակցին: Երկրորդ ռաունդում Սանդերսը նոկաուտի ենթարկեց Կլիչկոյին:


PHOTOLURE

«ՖՈՐՄՈՒԼԱ-1»

Կուլտհարդի 13-րդ մրցանակը

«Ֆորմուլա-1» դասի ավտոմրցավազքի աշխարհի այս տարվա առաջնության առաջին փուլն ավարտվեց շոտլանդացի Դեւիդ Կուլտհարդի հաղթանակով: Ավստրալիայում անցկացված Գրան պրիի մրցումներում, որն անցկացվեց նոր կանոններով, Կուլտհարդը բոլորից հաջող կողմնորոշվեց մրցասարածությունում եւ կարողացավ ցույց տալ լավագույն արդյունքը: 307,5 կմ-ը նա հաղթահարեց 1 ժամ 34,42 րոպեում: Աշխարհի հնգակի չեմպիոն Միխայիլ Շումախերը բավարարվեց 4-րդ տեղով: 2-րդ տեղը զբաղեցրեց Մոնտոյան, 3-րդը «Մակլարեն» թիմի անդամ Ռայկոնենն էր: Դեւիդ Կուլտհարդը մարզական իր կենսագրությունում 13-րդ ավտոմրցավազքը շահեց:

Էջը պատրաստեց ԱՐՈՍ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

ԱԶԳ Օրյա հետքերով

ԹԲԻԼԻՍԻ

«AES-Telasi»-ին Հայաստանից էլեկտրաէներգիա այլեւս չի գնի

Թբիլիսիում հովհարային անջատումներ, Ջուգդիդում բողոքի ցույց

Ամերիկյան AES ընկերությունը, որն իրականացնում է մայրաքաղաք Թբիլիսիի էներգահամակարգի մենեջմենթը, արդեն երեք օր դադարեցրել է Հայաստանից էլեկտրաէներգիայի ներմուծումը Վրաստան:

«AES-Telasi» վրաց-ամերիկյան ընկերության տնօրեն Իգնասիո Իրիբարենը չորեքշաբթի մամուլի ասուլիսում հայտարարեց, որ Հայաստանից էլեկտրաէներգիա ներմուծելու պայմանները ընկերության համար ծեռնտու չեն, եւ այդ պատճառով «AES-Telasi»-ին Հայաստանից այլեւս էլեկտրաէներգիա չի գնի:

Ընկերությունը Հայաստանից էլեկտրաէներգիան գնում էր 12,5 դրամով եւ Թբիլիսիի բնակիչներին վաճառում մոտ 37 դրամով:

Իգնասիո Իրիբարենը նախորդ փետրվարի 27-ի ասուլիսում հայտարարել էր. «Ես փորձում եմ հիմել օտարերկրյա մի ընկերություն, որը Վրաստանում հաջողված գործունեություն է ծավալել, բայց չեմ կարողանում: Սա նշանակում է, որ այս երկրում անհնար է ուղղակի բնականոն գործունեություն ծավալել»:

Պատճառնական Թբիլիսին իր հերթին նկատել է տալիս, որ AES-ը փորձում է անընդհատ մեղադրել վրացական կողմին իբր պայմանավորվածությունները խախտելու մեջ եւ հարմար պատրվակ է փնտրում, որպեսզի հեռանա Վրաստանից:

«AES-Telasi»-ն օրական 60-120 մեգավատ էլեկտրաէներգիա էր ներմուծում Հայաստանից, ինչը Ռուսաստանից ներմուծվող եւ Վրաստանում արտադրվող էլեկտրաէներգիայի հետ առաջվում էր մայրաքաղաք Թբիլիսիի էներգասնուցումը:

Երեկվանից Թբիլիսիում սկսվեցին հովհարային անջատումներ: Էլեկտրաէներգիայի պակասը պատճառ է դարձել, որ Վրաստանի ջրաէներին տրվող էլեկտրաէներգիան հասցվի նվազագույնի: Ըստ վրացական հեռուստատեսության հաղորդումների՝ Արեւմտյան Վրաստանի Ջուգդիդ քաղաքում երեկ տեղի է ունեցել բողոքի ցույց:

Նշենք նաեւ, որ «AES-Telasi»-ին կարողանում է բնակիչներից գանձել անցած էլեկտրաէներգիայի միայն 50 տոկոսի գումարը, ասել է, թե ամեն երկրորդ թբիլիսցին օգտագործած էներգիայի համար չի վճարում:

ԹԱԹՈՒԼ ՀԱԿՈԲՅԱՆ
Թբիլիսի



«Թեթեյան կենտրոնը» ս. թ. մարտ ամսից վերաբացել է իր դռները տարբեր միջոցառումների անցկացման համար եւ հրավիրում է բոլոր շահագրգիռ կազմակերպություններին: Տեղեկությունների համար դիմել 57 30 57, 57 24 22 հեռախոսահամարներով: Հասցեն՝ Երեւան, Խանջյան 50:

Հայտարարություն - հրավեր

«Արմենտել» ՀՁ ՓԲԸ-ն ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարարության արտոնագրած տվյալների փոխանցման եւ ինտերնետ ծառայություններ մատուցող կազմակերպությունների համար հայտարարում է հետեւյալը՝

1. «Արմենտել» ՀՁ ՓԲԸ-ի վերը նշած կազմակերպություններին ինտերնետ եւ տվյալների փոխանցման ծառայություններ մատուցելու նպատակով տրամադրած Հանրային համակցման հեռախոսային ցանցի (ՀՀՀՑ) բոլոր հեռախոսագծերը եւ E1 կարողունակությունները 2003 թ. մարտի 24-ից ունենալու են միայն մուտքային զանգեր ընդունելու հնարավորություն՝ առանց ելքային զանգերի հնարավորության: ՀՀՀՑ-ին ինտերնետ եւ տվյալների փոխանցման ծառայությունների մատուցման նպատակով օգտագործվող թվային հեռախոսագծերի միակողմանի (միայն մուտքային զանգեր ընդունելու հնարավորությամբ) համակցումը հանդիսանում է խնդրի ժամանակավոր լուծում՝ մինչեւ «Արմենտելի» կողմից անհրաժեշտ ներդրումային ծրագրի ավարտը, որից հետո ինտերնետ եւ տվյալների փոխանցման ծառայություններ մատուցող կազմակերպություններին տրամադրվեն միայն E1 կարողունակություններ:

2. Տրամադրված հեռախոսագծերի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով, ինտերնետ եւ տվյալների փոխանցման ծառայություններ մատուցող կազմակերպությունները մինչեւ 2003 թ. մարտի 20-ը «Արմենտել» ՀՁ կոմերցիոն գլխավոր տնօրինությանը (Սիսուանյան 2) պետք է գրավոր ներկայացնեն իրենց տրամադրված հեռախոսագծերի ցանկերը (համարները)՝ տարանջատելով դրանք ըստ օգտագործման նպատակների.
- Ինտերնետ եւ տվյալների փոխանցման ծառայությունների մատուցման համար (միայն մուտքային զանգեր ընդունելու հնարավորությամբ)
- Հեռախոսակապի ծառայություններից օգտվելու համար (մուտքային եւ ելքային զանգերի հնարավորությամբ):

Հեռախոսակապի ծառայություններից օգտվելու նպատակով տրամադրված (մուտքային եւ ելքային զանգերի հնարավորությամբ) հեռախոսագծերի պորտինի օգտագործումը, «Արմենտելի» բացառիկ իրավունքը հանդիսացող ծառայությունների մատուցման նպատակով, կդիտվի որպես թիվ 60 լիցենզիայի 4.Դ կետի խախտում, եւ տրամադրված հեռախոսագծերը կանջատվեն առանց զգուշացման:

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Իրաքի պատերազմը կազդի Հայաստանի աղամանդի բիզնեսի վրա

Սկիզբը էջ 1

2002 թ. Ռուսաստանից Հայաստան է առավել 367 հազար կարատ ալմաստ, այլ երկրներից՝ 450 հազար կարատ: Անցյալ տարի երկրում արտադրվել է 97 մլրդ 254 մլն դրամի ադամանդ: Արտահանվել է 103 մլրդ 929 մլն դրամի ադամանդ: Մինչդեռ 2001 թ. արտահանվել էր 47 մլրդ 141 մլն դրամի արտադրանք: Հայկական ադամանդներն արտահանվում են հիմնականում ԱՄՆ, Բելգիա, Ճապոնիա եւ Իսրայել:

Diamond Company of Armenia (DCA) ընկերության նախագահ, հայտնի ձեռնարկատեր Գագիկ Աբրահամյանը գտնում է, որ Քիմբեռլիի գործընթացին միանալն ուղղված է առաջին հերթին աֆրիկյան որոշ երկրների դեմ, որտեղ ահաբեկիչները զավթել են ալմաստի հանքեր, ալմաստներ են վաճառում գենի ձեռ բերելու նպատակով: Քիմբեռլիի գործընթացը թույլ չի տալիս այդ երկրներից գնել «հակամարտային» ալմաստներ: Այդ միջոցառումները հնարավորություն են տալիս իմանալու ալմաստների ծագումը: DCA-ն հումք է ձեռ բերում Ռուսաստանից եւ De Beers-ի կառույցներից: Այնտեղ չկան ինչ-ինչ «հակամարտային» ալմաստներ:

Աբրահամյանը հայտնեց, որ De Beers ընկերությունից առաջին անգամ ֆախ է ստացվել Քիմբեռլիի գործընթացի նոր պահանջով, որտեղ հաղորդվում է մասնակարավող ադամանդների ծագման եւ ճանապհի մասին: «Ոչ ոք իրավունք չունի ալմաստներ գնել ահաբեկիչներից եւ անօրինական կառույցներից», ավելացրեց DCA-ի նախագահը: Նրա կարծիքով, «Եթե Հայաստանը չմիանար այդ գործընթացին, ապա չէր կարողանա հումք ստանալ, եւ գործարանները հիմա պարապուրդ կտային»: Նա տեղեկություն հայտնեց Հայաստանի կառավարությանը, որը դեկտեմբերի վերջերին կարճ ժամկետում որոշում ընդունեց եւ այդ կոնվենցիային միանալու միջոցներ ձեռնարկեց: Խոսքը ձեռնարկատերը նշեց, որ Իրաքի պատերազմի դեպքում կտրուկ կվատանա իրավիճակն ադամանդների շրջանառության ոլորտում, ինչը կանդրադառնա նաեւ Հայաստանի վրա: Նրա խոսքերով, հայկական ադամանդների իրացման հիմնական շուկան ԱՄՆ-ն է, որը զգայուն կերպով արձագանքում է ռազմական գործողությունների սկսմանը: Պատերազմի դեպքում ամերիկացի կապիտալիստները ռիսկ չեն անի ձեռ բերել ադամանդներ, նախընտրելով իրենց մոտ պահել փողերը: Գ. Աբրահամյանը նշեց, որ Իրաքում սպասվող ռազմական գործողություններն արդեն այժմ ազդում են ողջ աշխարհի, այդ թվում Հայաստանի ադամանդի բիզնեսի վրա:

ՏԻԳՐԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Կրասնոդարից արտահում են թուրք մեսխեթցիներին

ԲՍԵՈՒ, 12 ՄԱՐՏ, ՆՈՅԱՆ ՏԱՊԱՆ: Տեղի իշխանությունները Կրասնոդարի երկրամասում փորձում են վտարել այնտեղ գտնվող թուրք մեսխեթցիներին: Ինչպես հաղորդում է «Էմ Փի էյ»-ը՝ վկայակոչելով մարդու իրավունքների կոմիտեի Նովոռոսիյսկի բաժանմունքը, միլիցիայի տեղական մարմինները բակ առ բակ շրջայց են կատարում, որտեղ ապրում են թուրք մեսխեթցիներ, եւ նրանց առաջարկում գաղթականական քարտեր: Թուրք մեսխեթցիների համար փախստականի կարգավիճակ տրամադրելու հարցը քննարկվում է ԱՄՆ, Թուրքիայի, Վրաստանի եւ Ռուսաստանի վերին օղակներում: «Էմ Փի էյ»-ի համաձայն, կրասնոդարյան որոշ բարձրաստիճան պաշտոնյաներ խնդրել են Ամերիկայի պաշտոնատար անձանց, որպեսզի նրանք չընդունեն թուրքերին իրենց մոտ: Այս դիրքորոշումը չի համապատասխանում երկրամասի նահանգապետ Տկաչովի հրապարակային հայտարարությանը թուրք մեսխեթցիների էմիգրացիային իր աջակցության վերաբերյալ: Կուբանի նահանգապետը Սոչիում հանդիպել է Վրաստանի նախագահ է. Շեւարդնաձեի հետ եւ քննարկել թուրք մեսխեթցիների իրենց պատմական հայրենիքը վերադարձնելու հնարավորությունը, սակայն առայժմ Տկաչովը հրաժարվում է հանդիպել հենց թուրք մեսխեթցիների հետ:

Պարսից ծոցում ականներ կհայտնաբերեն ծովաբները

ԱՄՆ ռազմածովային նավատորմի հրամանատարությունը մտադիր է հակաիրաքյան պատերազմի ժամանակ Պարսից ծոցում վարժեցված ծովաբներ օգտագործել դիվերսանտների եւ ստորջրյա ականների հայտնաբերման նպատակով: BBC գործակալության հաղորդման համաձայն, ներկայումս Պարսից ծոցում կան ամերիկյան եւ բրիտանական 130 ռազմանավ եւ օժանդակ նավ: Զինվորական ղեկավարությունը երկյուղներ ունի, որ դրանց դեմ «Ալ Ղաիդայի» ահաբեկչությունների սպառնալիքը միանգամայն իրական է:

Ծովաբները շատ խելացի են, հրաշալի լսում են ջրի տակ եւ կարող են աշխատել սահմանափակ տեսանելիության պայմաններում: Բացի դրանից, նրանք լողում են ժամում մինչեւ 40 կմ արագությամբ եւ կարող են բազմիցս սուզվել 300 մետր:

Զինվորականների մտահղացման համաձայն, ծովաբները պետք է պարեկություն անեն տարածաշրջանում եւ հայտնեն կասկածելի անձանց եւ առարկաների մասին: Այդ կաթնասունները կարողանում են ականների կամ դիվերսանտների վրա ամրացնել տարբերիչ լողաններ, դյուրացնելով հնարավոր վտանգի հայտնաբերումը:

Կենդանիների իրավունքների պաշտպանները վրդովմունք են արտահայտել ռազմական գործողություններում ծովաբներ օգտագործելու զինվորականների մտադրության կապակցությամբ: «Նրանք բանակում չեն հավաքագրվել, գաղափար չունեն Իրաքի կամ Սադդամ Հուսեյնի մասին եւ, ամենայն հավանականությամբ, չեն գոյատեւի», հայտարարել է բնապահպանական կազմակերպություններից մեկի մամլո քարտուղարը:

Ռազմական գործողություններում ծովաբների օգտագործումը կենդանիների համաձայն օգտագործման առաջին օրինակը չէ: Երկրորդ աշխարհամարտի ժամանակ ԱՄՆ-ը մտադրվել էր ճապոնիայի վրա գրոհ ձեռնարկել չղջիկների բանակի միջոցով, որը պետք է հրկիզեր ճապոնական օբյեկտները: Սակայն վարժական թռիչքներից մեկի ընթացում չղջիկները հրկիզեցին Նյու Մեխիկոյի նահանգի ռազմական օդանավակայանը: Դրանից հետո ամերիկացիները հրաժարվեցին չղջիկներ օգտագործելու մտադրությունից:

Պ. Բ.

«Տիգրիս» ՍՊԸ ռիելտորական ընկերությունը Երեւանի «Ադամանդ» առեւտրահասումնային բորսայի հարթակում աճուրդային վաճառքի է ներկայացնում.

«ՌԻԱ-բանկ» ՓԲԸ-ին պատկանող անշարժ գույքը՝
– Տարածք (ընդ մակերեսը՝ 163,5 ք.մ)
Մեկնարկային գինը՝ 11240000 դրամ:
Հասցեն՝ ք. Երեւան, Խաղաղ Դոնի փող. 23 շենքին հարող տարածք
Աճուրդները՝ բաց, այնուհետեւ հոլանդական եղանակով՝ 2003 թ. ապրիլի 14-ից յուրաքանչյուր երկուշաբթի, չորեքշաբթի եւ ուրբաթ, ժ. 13.00-ից, ք. Երեւան, Միր Մկրտչյան 5 հասցեում:

☎ 529353 ԱՆՎՃԱՐ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Վաճառվում է Рубин հեռուստացույց 51 սմ տրամագծով, էկրանը TOSHIBA մակնիշի, տեխ. մասերը՝ արտասահմանյան: Գինը՝ 65 դոլար: Հեռ.՝ (09)423833
- Վաճառվում է մեքենայի հեղուկ գազի սարքավորում՝ իր բոլոր պարագաներով: Գինը՝ 80 դոլար: Հեռ.՝ 531439 (Արմեն):
- Վաճառվում է BMW մեքենայի ավտոպահեստամասեր, էժան, նաեւ նոր «Чайка» կարի մեքենա: Հեռ.՝ 533607:
- Վաճառվում է 1989 թ. արտադրության AUDI 80 կուպե սպորտային, գույնը սպիտակ, շարժիչը՝ 6 մխոցային, ունի բարձրակարգ ստերեո համակարգ: Գինը՝ 3000 դոլար: Հեռ.՝ (09) 431079:
- Տրվում է վարձով Եզնիկ Կողբացի 18 հասցեում գտնվող 2 սենյականոց բնակարանը: Գինը՝ ամսական 200 ԱՄՆ դոլար: Հեռ.՝ 58-90-05, Մարիետա:
- 30 ք.մ տարածք կ/թ «Երեւանի» մոտ, հ=45, 2/1 հարկ, ունի նկուղ: Հարմար է օֆիսի կամ խանութի համար: Գինը՝ 20.000 դոլար, վարձը՝ 250 դոլար: Հեռ.՝ 525106, (09) 478905, Արթուր:
- Վաճառվում է 2 սենյականոց բնակարան, Ֆուրմանովի 37 շենք, բն. 41, ընդ. մակերեսը՝ 60 ք.մ: Գինը՝ 15.500 դոլար: Հեռ.՝ 251296, Գայանե:
- Մասնավոր գնով վաճառվում է արտադրական մասնաշենք 1100 ք.մ մակերեսով: Շենքում տեղադրված են փայտամշակման եւ օբսիդիան մշակող հաստոցներ, առանձին տեղամասերով: Շենքն ունի 5000 ք.մ տարածք, ցանկապատված է, եւ 160 կվ.ժ տրանսֆորմատոր: Տեղեկությունների համար զանգահարել 74-39-78 եւ (05) 20-42-83 (ժամը 20:00-ից հետո):
- Տրվում է վարձով 2 սեն. բն. կենտրոնում (5/2) բոլոր հարմարություններով: Գինը՝ 200 դոլար: Հեռ.՝ 538341:
- Կգնեմ սեփական տուն մինչեւ 15.000 դոլարի սահմաններում, հողամասի առկայությունը պարտադիր է: Հեռ.՝ (09) 42 93 53:
- Վաճառվում է Երևին Շենգավիթի 9 փողոցի 125 հասցեում 2 սենյականոց սեփական տուն: Ընդհանուր բնակ. տարածքը՝ 60 ք.մ, նաեւ բակ 20 ք.մ, ջրատար, վերանորոգված է: Գինը՝ պայմանագրային: Հեռ.՝ 48-45-63, Անդրանիկ կամ Կարինե:
- Կատարում եմ համակարգչային ծառայություն (տեխստերի հավաքում ռուսերեն, հայերեն եւ անգլերեն), նաեւ արտատպում: 1 համակարգչային էջը՝ 150 դրամ: Հեռ.՝ 26-48-40:
- Կազմակերպում եմ մանկական շոուներ, ծննդյան տոներ եւ այլ միջոցառումներ: Հեռ.՝ 231170, Գրիգոր:
- Վաճառվում են բահումային երկու խոշոր բարձ. որակի պարարտներ, աշխատում է գազով, պատրաստված են ռուսական թիթեղից: Վաճառվում է նաեւ Չորչը բարձ. սեղան: Հեռ.՝ 24-73-42:
- Կգնեմ նոր մոդելի բջջային հեռախոսներ: Հեռ.՝ 09 46 93 72, Հրանտ:

«Գինդ» տպագրատուն, Երեւան, Բագրատունյաց 70ա Գրանցման թիվ 65. Դասիչ 69150. Տպաքանակը՝ 5000 Ստորագրված է տպագրության՝ 12. 3. 2003 Գինը՝ 100 դրամ